№ 36 ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 18

1906

ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 18 № 36

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ **1906** ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։ Փետրվարի 1-ից մինչև 1 յունիսի 3 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով։ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

«Արշալոյս»-ի գրաշարները յայտնում են տպագրական գործի աշխատաւորներին, որ ուրբաթ, փետրվարի 17-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեց իրանց անմոռանալի ընկեր՝

ՀԱՅՐԱՊԵՏ ԲԱԲՈՒՐԵԱՆՑԸ

Թաղումը տեղի կունենայ, կիրակի, փետրվարի 19-ին. յուղարկաւորութիւնը կը սկսվի առաւօտեան ժամը 10-ից, Գանօվսկայա փող. № 17, դէպի Ջգրաշէնի ս. Աւետեաց եկեղեցին, իսկ այնտեղից Վերայի գերեզմանատունը։ (շ.կ.) 1—2

Աւետիք, Գէորգ, Ալեքսանդր, Սարենիկ եւ Մարիամ Բաբուրեանցներ ցաւօք սրտի յայտնում են իրանց ծանօթներին, ազգականներին և հանգուցեալի ընկերներին,—առաջինը՝ իր որդու, երկրորդն ու երրորդը՝ իրանց եղբօր, չորրորդն՝ իր ամուսնու, և հինգերորդը՝ իր տագեր, վաղաթառամ

ՀԱՅՐԱՊԵՏ ԲԱԲՈՒՐԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ փետրվարի 17-ի առաւօտ։ Յուղարկաւորութիւնը լինելու է կիրակի, ամսիս 19-ին, առաւօտեան 10 ժամին, հանգուցեալի բնակարանից՝ Գանօվսկի փող. № 17, դէպի Ջգրաշէնի եկեղեցին։ Թաղումը Վերայի գերեզմանատանը։

Գ. ԵՍ. ԱՒՍԱՐԿԻՍՕՎԻ
ԱՅԳՈՒ ԾԱՌԵՐԻ
ՏՆԿԱՐԱՆ

ծախվում են պտղատու ծառեր արտասահմանեան, ռուսական և Կովկասեան տեսակների։ Հասցէն՝ ст. Скра Зак. Жел. Дор. Авсаркисову. Ցուցակը ուղարկվում է ձրիաբար։

4—10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խորհրդակցութեան առիթով. Վերջին տեղեկութիւններ. Մտքեր և փաստեր. Մամուլ. Սենատոր Կուզմինսկու տեղեկագիրը. Բագուի իրականութիւնից. Հայ-թուրքական հաշտութեան պայմանները Երևանում. Թուրք հայկական ընդհարումները և Ահմեդ Րիզա Բէյը. Մեր պարտքն է հոգալ. Տիգրան երկաթ. Դէպքերը Սօչիում. Նամակ Սղնախից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Նամակ Պարսկաստանից. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Եւրոպա և Հայաստան. Թուրքերի գործունէութիւնը յօգուտ Ռուսաստանի։

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

I

Երկուշաբթի օր, փետրվարի 20-ին կը կայանայ հայ-թուրքական խորհրդակցութեան սկզբնաւորութիւնը։

Որքան մեզ յայտնի է, խորհրդակցութիւնը կը բանայ Կովկասեան Փոխարքան, իսկ այնուհետեւ տեղի կունենան մի շարք նիստեր Փոխարքայի օգնականի նախագահութեամբ։

Մինչև այժմ չէ հրատարակվել և չէ յայտնվել պարապմունքների ծրագիրը։ Ինչպէս մենք լսում ենք, չէ էլ մշակված մի այդպիսի ծրագիր մանրամասն ցուցումներով այն կէտերի մասին, որոնք պէտք է քննութեան առարկայ լինեն հայ-թուրքական ժողովներում։

Եւ ուրեմն խորհրդակցութեան մասնակցողները իրանք պէտք է մշակեն իրանց պարապմունքների ծրագիրը և որոշեն նրանց քննութեան եղանակները։

Մենք մեր կողմից չենք շտապում առաջարկել այն հարցերը, որոնք կարելի է և նպատակայարմար է քննել խորհրդակցութեան նիստերում։ Այդ կանեն իրանք պատգամաւորները, պայմանաւորվելով միմեանց հետ։ Հարցեր շատ կան և մենք վերջին տարվայ ընթացքում շատ և շատ անգամ ենք խօսել ու պարզել այն բոլոր խոշոր ու մանր հարցերը, որոնք կապ ունեն հայ-թուրքական ընդհարումների և առհասարակ հայ-թուրքական յարաբերութիւնների հետ։ Պէտք է ընտրել նրանցից ամենակարևորները և էականները և նրանց վրա կենտրոնացնել բոլոր ուշադրութիւնը, որպէսզի ժամանակը վատնված չը լինի ներկայի համար ապարդիւն երկարաբանութիւններով և երկրորդական տեղ բռնած չը լինեն աւելի խոշոր հարցերը։

II

Անկասկած՝ խորհրդակցութեան մասնակցող հայ և թուրք պատգամաւորների մտատանջութեան գլխաւոր առարկան այն գործնական հարցն է, թէ ինչպէս ազատենք մեր երկիրը այն ընդհարումներից, որոնք մի ամբողջ տարի տանջում, արիւնաքամ էին անում մեր ժողովուրդներին և սնանկացնում ու աւերում մեր երկիրը։

Մենք երբէք չենք համակրել այդ ընդհարումներին և սրտի մորմոքով ենք վերյիշում այն դժոխքը, որ տիրեց մեր երկրին և արհաւիրքներ ստեղծեց ազգաբնակութեան համար։ Եւ անշուշտ մենք միշտ էլ պատրաստ ենք ամեն միջոցներով նպաստել խաղաղութեան և հաշտութեան վերականգնման երկու կռւող ժողովուրդների մէջ։

Դա մեր անկեղծ և սրտագին տենչանքն է։

Մենք հաւատացած ենք, որ թուրքերն էլ իրանց կողմից կը յայտնեն պատրաստականութիւն հաշտ և խաղաղ ապրելու։ Նրանք նոյն իսկ կը ջանան հաւատացնելու, որ մենք հայերս ենք անհաշտ, իսկ իրանք միայն և միայն ձգտել են հաշտ յարաբերութիւնների մեզ հետ։ Սակայն խոստմնազանցութեան մի շարք փաստեր սարսափելի հարուածներ են տուել վստահութեան գաղափարին և այժմ անհրաժեշտ են չափազանց ուժեղ, հեղինակաւոր և համոզիչ հաւաստիացումներ, թէ արդարև մեր թուրք հարևանները վճռել են ամենակտրական և անշեղ կերպով վերջ դնելու ընդհարումներին։

Վստահութեան զգացմունքը ամենակարևոր կէտն է հաշտութեան գործում. իսկ վստահութիւնը արդիւնք է հաստատ համոզմունքի։

III

Հայ-թուրքական ընդհարումների դադարման գործում բացի հայերից և թուրքերից որոշ ազդեցիկ դեր վերապահված է կառավարութեան, որը պէտք է բոլորովին որոշ դիրք բռնի այդ գործում, իր կողմից միջոցներ գործ դնելով վերջ տալու այն բոլորին, ինչ որ առաջացնում է ընդհարումներ։

Մինչև այժմ ազգաբնակութեան համար պարզ չէ թէ արդեօք կառավարութիւնը որոշել է չէզոք դիրք բռնել կռւող տարրերի վերաբերութեամբ և թողնել այդ կռւող կողմերին վերջացնելու միմեանց հետ իրանց հաշիւները, թէ մտադիր է եռանդուն միջոցներ գործ դնել միջամտելու և ամենակարճ ժամանակում վերջացնելու երկու տարրերի սոսկալի մաքառումը և կռիւը։ Իսկ մի և նոյն ժամանակ փաստերի մի չափազանց մեծ շարք կանգնած է մեր առաջ ապացոյցներ բերելու, որ հին ռէժիմի ճացորդները ոչ միայն չէզոք դիրքի մէջ չէին իրանց պահել, այլ ակներև կերպով հովանաւորում էին ասպատակողներին ու աւազակներին, ամենևին ոչ մի քայլ չանելով պաշտպանելու հալածվածներին, նեղվածներին և վնասվածներին։ Հայ սիրտը զգում էր իրան խորապէս վիրաւորված այն յուսահատեցնող դէպքերից, երբ հին ռէժիմի ասպետները ծաղրում էին հայի տանջանքը ու տառապանքը և անտես էին առնում նրա գանգատներն ու բողոքները։

IV

Այդ երեք տարրերը, այն է երկու կռւող ազգութիւնները և իշխանութիւնը պէտք է կարողանան հանդէս բերել այն վստահութիւնը, որը միայն և միայն կարող է հանգստացնել մտքերը և խաղաղութիւն հաստատել երկրի մէջ։

Ինչպէս պէտք է այդ վստահութիւնը առաջ գայ—ահա այն դժուար հարցը, որի մասին պէտք է լուրջ հոգս տանեն խորհրդակցութեան անդամները։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուլաւէր, փետրվարի 17-ին.

Ամսիս 15-ին տեղիս իշխանութիւնը, տանուտէր Վախտանգ Մեհրաբեանի միջոցով յայտնեց շուլաւէրցիներին, որ վճռված է պատերազմական դրութիւն մտցնել գաւառում և պատուիրեց բնակիչներին այլ ևս զինված չը շրջագայել, երեկոյեան ժամը 7-ից անց ամենևին փողոցներում չերևալ, հակառակ դէպքում այդպիսիները խուզարկութեան կենթարկվեն և խիստ կը պատժվեն։ Իսկ թուրքաբնակ մի քանի գիւղերում շուտով էկզեկուցիա են նշանակելու և ինչպէս լուրեր են պտտում, նրանցից մի քանի գիւղեր էլ, որոնք աւելի մասնակցութիւն են ունեցել Բորչալուի թալաններին ու ջարդերին, մտադրութիւն կայ գաղթեցնել և նրանց տեղ ուրիշ գաղթականութիւն հիմնել։ Թուր- [illegible] հետև Կովկասում ռուս կառավարութեանը մեռած էին համարում. բայց այժմ խրատութիւնների են հանդիպում, իսկ բէկերը և աղալարները ահ ու սարսափի մէջ են, որովհետև հիմա շատ լաւ հասկանում են, որ հայ կալուածատէրերի և պանրի գործարանատէրերի վնասները փոխարինելու համար արդէն վճռված երկու միլիօնը երբ տեղիս ադմինիստրացիան սկսէ պահանջել առանց այն էլ քաղցածութեան դուռը հասած և այդ շահագործող հարստահարիչների ձեռքով թշուառացած թուրք ռէաթներից, սրանք պիտի անշուշտ մեծ ղալմաղալներ բարձրացնեն նրանց դէմ և գործը շատ սուր կերպարանք է ստանալու։ Նախազգալով վտանգը՝ այդ բէկերը և աղալարները խնդրել են գաւառապետ Բեգանովից, որ Փոխարքայի մօտ միջնորդէ մի միլիօն պետական գանձարանից վճարել, միւսը թուրք ազգաբնակութիւնը։ Միջնորդութիւնը արդէն արված է, սակայն հետևանքը անյայտ։ Դրանով շահագործողները ուզում են իրանց ռէաթի բեռը—ջարմէն մի քիչ թեթևացնել և նրա աչքում մի քիչ «լաւ մարդ» երևալ այդ «բարեգործութեամբ»։ Թուրքերը սակայն խելքի են եկել. նրանց տրամադրութիւնը փոխվել է վատ դէպի շահագործողները։ «Մենք կը կոտորվենք, ոչ մի կոպէկ ջարմայ չենք տայ, թող ջանը դուրս գայ սաբաբ—պատճառ եղողներին»։ Նրանց մէջ վերջերս մեծ ձգտում և պատրաստականութիւն է նկատվում շահագործողներին կառավարութեան ձեռքը մատնելու։

Ամսիս 14-ին Բայդարի և Քիրդարի թուրքերը բողոքագիր ներկայացրին Շուլաւէրում գաւառական վարչութեանը, խնդրելով հեռացնել իրանց միջից աղալարներին, որոնք թէ շահագործում են իրանց գիւղացիական դասակարգային իրաւունքը, նոյն իսկ անձնաւորութիւնը և թէ չեն դադարում հայերի դէմ գրգռելուց։ Հիմքն արդէն դրվեց. մի ցանկալի, ուրախալի երևոյթ, որին անտարակոյս կը հետևեն և միւս թուրք հարևան գիւղերն էլ, ինչպէս շատերն են խոստացել այդ անելու։

Արժանագրելու մի ուրախալի երևոյթ էլ այս է, որ գաւառապետի օգնականը—պ. Բագրաձէն բոլոր գիւղերից թուրք քեթխուդաներին-աղսախկալներին կանչելով իր մօտ՝ առանձին-առանձին ստորագրութիւններ առաւ իւրաքանչիւր գիւղի պատասխանատուութեան համար տաստաս հոգուց, որ մի որ և դէպք պատահելիս՝ դրանք բանտ են նստելու մինչև քննութեան պարզելը։ Այդ միևնոյն օրը, փետրվարի 15-ին, մօտ 300 թուրքեր էին կանչված Բաքրաձէի մօտ սար քաշելու համար խորհրդակցելու։ Այդ մասին կը գրեմ այլ անգամ։ Այդ օրը թուրքերը աղաչում էին հայերին հաշտվել. մերոնք պատասխանում էին թէ հանգիստ եղէք, ձեր խռովարար աղալարներին պատժեցէք, մեր վնասները տուեցէք, հաշտութիւնը ինքն ըստ ինքեան կը լինի։

Գրիգոր Բալասանեան

Շուշի, փետրվարի 13-ին

Աւերակներ... 500 տուն, 500 խանութ։ Հեշտ է ասել ու անցնել։

Քար սրտի և կարծր ջղերի տէր մարդ պէտք է լինի, որ նայէ նրանց, չափէ, ձևէ ու մտածէ նորոգելու։ Ո՛չ տէրն է նայում, ո՛չ քաղաքացին մօտենում և ո՛չ դրամատէրը սիրտ անում քար շարժել, քար կանգնեցնել։

Մի քանի օր ևս և շուտով գարուն կը բացվի, գարուն մեռած կեանքի վերակենդանութեան, բնութեան շարժման, դաշտերի, այգիների մշակման և վերջապէս շինութիւնների կառուցման։

Ահա այս շինութիւններն են, այս այրված, մոխիր կտրած տները, որոնք շուշեցու մտահոգութեան առարկայ են դարձել և մեր այս յօդուածի նիւթ։

Կը նորոգվե՞ն արդեօք նրանք։

Մենք կանգնած ենք այնպիսի դիլեմմայի առաջ, որ դժուարանում ենք այս հարցին դրական պատասխան տալ։ Բայց կը փորձենք յայտնել մեր անհատական կարծիքը։

Թողնենք մի կողմ դեռ այն հարցը թէ՝ կը խաղաղվի՞ ժողովուրդը—հայ և թուրք, կը հանգստանա՞ն յուզված կրքերը և կը դադարի՞ արիւնհոսութիւնը, որ մարդու ձեռքը սրտով մի բանի կպչի։ Աւելի պարզ թէ՝ կարո՞ղ է յուսալ շուշեցին, որ իր տունը կանգնեցնելով մի երկրորդ հրդեհ ևս չի լափիլ նրան։

Դա հեշտ լուծել չէ կարելի և եթէ դրա լուծման սպասենք, պէտք է ձեռքներս ծալենք նստենք և տեսնենք թէ ինչպէս է տնօրինում նախախնամութիւնը մեր վիճակը։

Դրան աւելի շուտ լուծել կարող է ռէժիմը, ժամանակը։

Բայց դրան էլ սպասել չէ կարելի։

Պէտք է նորոգել, աշխատել, գործի կենալ, ապրել։—Դա ժամանակի հոսանքն է, նրա պահանջը և նրա առաջը կտրել անկարելի է։

Դեռ [illegible] տարի էր, [illegible]րում, երբ դեռ մխում էին այրված տներն ու խանութները, որ մեր յօդուածներում այն միտքն էինք յայտնում թէ՝ եթէ դրսաբնակ շուշեցի հարուստներն ուզում են իրանց հայրենի քաղաքը շէն ու կանգուն տեսնել, պէտք է բեռերով ու փէշերով ոսկի թափեն, որ հնար լինի այս աւերակները նորոգել։

Այդ տնատէրերից հինգ տոկոսը հազիւ կարող է իր միջոցներով նորոգել իր կալուածքը. մնացած 95 տոկոսը կամ հրդեհից իսպառ աղքատացած հարուստներ են կամ տների ու խանութների վարձով ապրողներ։ Դրանք բոլորն էլ, շատ աննշան բացառութեամբ, թողել են Շուշին, իրանց աւերակները և փախել իրանք էլ չը գիտեն թէ ո՛ւր և ինչի՛ համար...

Պէտք է օգնել դրանց, խրախուսել, միջոց հայթայթել, որ վերադառնան հայրենիք ու իրանց աւերակները նորոգեն։

Այդ տներն ու խանութները քաղաքի ամենաառաջին տեղն են բռնում։ Նրանք լաւ վարձ են տուել իրանց տէրերին։

Թո՛ղ շուշեցի դրամատէրերը մի ընկերութիւն կազմեն, պայմանաւորվեն այդ տնատէրերի և խանութատէրերի հետ, 5, 10 տարի ժամանակով, շինեն, շէնացնեն այդ կալուածները և միջոց տան թէ նրանց տէրերին ապրելու, թէ բազարը կենդանացնելու և թէ իրանց դրամագլուխը ժամանակի ընթացքում ստանալու։

Ահա մեր առաջարկած միջոցը, մեր կարծիքը այդ մասին։

Հաւատացնում ենք, որ վնաս չեն անի դրանք և չեն փոշմանի։

Պէտք է վերակենդանութիւն տալ Շուշուն։ Նա վճառաշահ քաղաք է։ Այնքան էլ յետ ընկած չէ։

Ձեր ձեռքին է նրան թէ՛ փչացնելը և թէ՛ կանգնեցնելը։

Նա ապագայ ունի։ Ապագայ իր հանքահարուստ շրջականներով։ Աչքաթող մի անէք։ Շուտով գարուն է։

Պէտք է շինել։

Շինենք....

Տ.

ՄԱՄՈՒԼ

Ինչպէս յայտնի է, Բաթումում, անյայտ մարդկանց ձեռքով սպանվեց Բաթումի շրջանի քաղաքապետի պաշտօնը առժամապէս վարող Իվան Ա. Իվանովը։ Սպանութեան ժամանակ նրա հետ էր գտնվում Հիւսէյին Շերվաշիձէ, Աջարիայի բէգերից մէկը, որը փորձած լինելով մարդասպաններին ձերբակալելու, և հակառակ այս վերջինների կողմից եղած կրկնակի նախազգուշացումներին յամառելով հալածել սպանիչներին, սպանվեց և ինքը։ Շերվաշիձէի սպանութիւնը մեծ յուզում առաջացրեց Աջարիայի մահմեդականների մէջ և մազ մնաց, որ Կովկասը ականատես լինէր մի նոր սարսափի, մի նոր եղբայրասպանութեան — աջարա-վրացական ընդհարումների։ Ահա այդ հարցի մասին «Հայաթ» թերթին գրում են Բաթումից մի բաւական հետաքրքիր նամակ։

«Հայաթի» թղթակիցը պատմում է, որ աջարացիները Բաթումի տեղական թուրքերին մեղադրում, ամբաստանում են եղել իբրև վրացիների կողմնակից.

«Վրացիները մինչև այժմ մեզ դիմամբ ոչ մի վնաս չեն հասցրել, պատասխանում էին Բաթումի մահմեդականները աջարացիներին—ասում է թուրք լրագրի թղթակիցը—առաջն առնելու համար ապագայ որ և է հաւանական թիւրիմացութիւնների։ Ինչպէս եթէ Աստուած մի արասցէ որ և է կռիւ տեղի ունենար Բաթումում, ինչ կը լինէր քաղաքի քսան, երեսուն տեղացի մահմեդական ընտանիքների դրութիւնը։ Աջարացի մեր կրօնի եղբայրները ո՞ւմ պիտի վստահանային դրանց։ Բացի այդ՝ ո՞ւմ պաշտպանութեան պիտի կարողանայինք յանձնել Վրաստանի մի քանի տեղերում բնակվող օսմանցի և այլ մահմեդականներին։ Միթէ վայել է, յարմար է, որ մահմեդական ու վրացի կռւեն, ինչպէս կռւում են մահմեդականն ու հայը։ Մենք աշխատում ենք մէջտեղից վերցնել հայ-մահմեդական անօգուտ կռիւը. ինչ, միթէ աջարացիները ուզում են մեր վզին կապել վրացա-մահմեդական մի կռիւ»։

Եւ թղթակիցը պատմում է, թէ ինչպէս կատարվեց Շերվաշիձէ Հիւսէյն բէգի սպանութիւնը։ Դա դիտաւորեալ սպանութիւն չէր. տէրրօրիստները հարկադրված սպանել էին նրան, որ ընկերակցում էր Իվանովի և ամեն ջանք գործ էր դնում բռնելու մարդասպաններին։ Այդ սպանութիւնը մեծ յուզում է պատճառել Աջարիայում, որովհետև մի երկու տարուց ի վեր մի քանի մահմեդականներ այսպէս թէ այնպէս սպանված լինելով՝ աջարացիները վրդովված էին վրացիների դէմ և այս վերջիններին մեղադրում էին դիտաւորեալ թշնամութեան մէջ։

Բաթումի զինուորական հրամանատարը տեղեկանալով աջարացիների յուզմունքի մասին, իսկոյն հաւաքում է տեղացի մի քանի պատուաւոր անձերի և առաջարկում է, որ աջարացի մահմեդականները պատուիրակներ ընտրելով ուղարկեն Բաթում և յայտնեն հրամանատարին իրանց խնդիրքը։

«Աջարիայի տասնուեօթ համայնքների կողմից ներկայացուցիչներ գալով Բաթում—շարունակում է թղթակիցը—դեռ ևս հրամանատարին չը ներկայացած կայարանում խորհրդակցութեան նստեցին։ Նոյն միջոցին Բաթումի տեղական մահմեդականներից (խօսքը ոչ—աջարացիների մասին է) մի քանի հոգի կայարան գնալով իրանց աջարացի մահմեդական եղբայրների հետ տեսակցել ցանկացան, բայց աջարացիները նրանց, բաթումցիներին, չընդունեցին, ասելով որ իրանք ո՛չ մի ընդհանուր բան չունեն նրանց հետ։ Ի՞նչ է արդեօք պատճառը, որ աջարացի մահմեդական եղբայրները վստահութիւն չունեցան իրանց բաթումցի կրօնակիցներին մասին և նրանց հետ վարվեցին իբրև խուլիգանների հետ։

Այնուհետև աջարացիները նահանգապետի բնակարանը գնալով՝ անխտիր, Բաթումի բոլոր վրացիների վերաբերմամբ մի շարք անտեղի ու անվայել առաջարկներ արեցին. առհասարակ վրացիներին վռնդել Բաթումից, հեռացնել բոլոր ծառայողներին և այլն և այլն։ Նահանգապետը պատասխանել է, որ չի կարող ապօրէն գործողութիւններ ձեռնարկել, բայց նա, օրէնքի շրջանակում, բոլոր հնարաւորը կանէ ի նպաստ մահմեդականների։

Թղթակիցը այնուհետև պատմում է, որ աջարացիների խնդրանքի համաձայն նահանգապետը գնացել էր Աջարիա և մեծ ամբոխի առաջ աջարացիների հաւատարիմ հպատակութեան զգացմունքին պատասխանելով յայտնել՝ որ ոչ միայն ինքը, այլ և նոյն իսկ կայսրը միանգամայն հաւատացած է նրանց հաւատարմութեան մասին։ Եւ դրանից՝ կայսրի հեռագիրը՝ ուղղված աջարացիներին։

Գանք սակայն մեր բուն նպատակին։ Շատ տխրալի, շատ ցաւալի է, որ աջարացիները իրանց վստահութիւնը վերացրել են Բաթումի տեղական մահմեդականներից և հեռու են փախչում նրանցից իբրև վրացիների կողմնակիցներից։ Ինձ թւում է, թէ կարող է պատահել, որ մի մահմեդական՝ մի ուրիշ մահմեդականի, մի քանի մահմեդական ընտանիքներ, մի քանի ուրիշ մահմեդական ընտանիքների դաւաճանեն։ Բայց ոչ մի հիմք չը կայ կարծելու, որ ամբողջ Բաթումի մահմեդականները կդաւաճանեն իրանց աջարացի կրօնակիցներին։ Ի՞նչպէս այս բանը չը մտածեցին աջարացիները։ Զարմանալի է, որ կարծում են, թէ մահմեդականը կարող է համաձայնվել, միանալ ոչ-մահմեդականի հետ իր կրօնի եղբօրը դաւաճանելու համար։ Ե՞րբ է պատահել այդպիսի բան։ Դա ոչ մի ժամանակ չէ կարելի մոռանալ։ Ես ամենևին չեմ կասկածում, որ Աջարիայի մահմեդականները շուտով պիտի ըմբռնեն իրանց սխալը և զղջան ու տխրեն։ Մենք խորհուրդ ենք տալիս աջարացիներին, որ մի այլ անգամ այդպիսի սխալ չը գործեն և իրանց յաւիտեան չը խայտառակեն։ Մահմեդականները որքան իրանց հաւատարիմ ցոյց տան, այնքան փառք ու պատիւ է իրանց կրօնի եղբայրների համար։ Բայց պարսաւելի է աջարացիների բացարձակ անվստահութիւնը դէպի Բաթումի մահմեդականները։

Այս նամակի տակ «Հայաթ»-ը աւելացնում է հետևեալ խմբագրական նկատողութիւնները.

Եթէ աջարացիները մահմեդական են, չը պէտք է որ բաժանվեն շարիաթից։ Շարիաթը չէ կարող երբէք թոյլ տալ, որ մի երկու սպանված մարդկանց պատճառով ասպարէզ բացվի ազգային կռւի... Մանաւանդ բարեացակամ ազգի հետ, վրացիների հետ, որոնք առ հասարակ բարեացակամ ազգ են... Բաթումի կողմերի աջարացիները կամ վրացիները, եթէ չարամիտ, վնասակար անձանց գրգռումին անսալով մի կռիւ առեղծեն անգամ, հաւատացած թող լինեն, որ բոլոր վրացիները և բոլոր մահմեդականները միայն նզովք կը կարդան գրգռումից, պրովոկացիայից խաբվողների հասցէին...

Այո, միմիայն նզովք։ Բաւական է, որքան խեղդվեց այս դժբաղդ երկիրը արիւնի մէջ։

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

XXX

Վերջապէս, պաշտօնապէս յայտարարվեց, որ Պետական Դումայի կամ Ռուսաստանի ապագայ պարլամենտի կամ օրէնսդրական ժողովի գումարումը նշանակված է ապրիլի 27-ին։

Նախապատրաստական ընտրութիւնները արդէն սկսվել են Ռուսաստանում. շուտով նրանք կըսկսվեն և մեր երկրում։

Արդ, ի՞նչ դիրք պէտք է բռնել։ Կամ դնելով հարցը աւելի չեշտակի, ինչպէս դրել են Ռուսաստանում շատերը, պէ՞տք է գնալ Դումա, թէ ոչ։

Տեսնենք, այդ հարցի առիթով նախ ինչ են մտածում Ռուսաստանում։

Ինչպէս գիտենք երկու կարծիք և պրօպագանդա կայ։ Ծայրայեղ կուսակցութիւնները և գլխաւորապէս սօցիալ-դէմօկրատական կուսակցութիւնները պնդում են, որ պէտք է բօյկօտի ենթարկել Պետական Դուման, այ- [illegible] -զորների ընտրութիւն չը կատարէ և այդպիսով անհնարին դարձնէ Դումայի գումարումը։ Նորերս, այն է փետրվարի 8-ին, Մոսկվայում կայացած «Ժողովրդական ազատութեան» կամ սահմանադրական-ռամկավարական կուսակցութեան բաժնի մի ժողովում, սօցիալ-դէմօկրատները, հակաճառելով Շչէպկինին ասացին, թէ «ով գնայ Պետական Դումա, նա կը կատարէ ստորութիւն»։

Բայց ինչի՞ համար ծայրահեղ կուսակցութիւնները կամենում են բօյկօտի ենթարկել Պետական Դուման։ Նրանք ասում են, որ Պետական Դուման այն չէ, ինչ որ մենք պահանջում էինք. նա բուն ժողովրդական ներկայացուցչութիւն չէ, սահմանադիր ժողով չէ՝ ընտրողական ընդհանուր, հաւասար, գաղտնի և ուղղակի քուէարկութեամբ, որը միայն կարող է բուժել Ռուսաստանի ծանր վէրքերը և տալ նրան տնտեսական, ֆինանսական, բա- [illegible] -րանց կարծիքով Պետական Դուման միայն մի «պալլիատիվ» է, որ րէակցիօնական կառավարութիւնը մտածել է՝ յեղափոխութեան գործը քնացնելու և ժողովրդին մոլորեցնելու համար։

Եւ պէտք է խոստովանել, որ Վիտտէ-Դուրնովեան մինիստրութիւնը հոկտեմբերի 17-ի հռչակաւոր մանիֆեստի հրատարակման օրից մինչև այսօր ապօրինութեան, օրէնքների խախտման մի շարք այնպիսի ակտեր կատարեց, որ բոլորովին ներշնչեց ժողովրդի մէջ այն համոզմունքը, թէ հոկտեմբերի 17-ի մանիֆեստի խոստացած քաղաքացիական ազատութիւնների և սահմանադրական կարգերի իրագործումը լոկ խօսքեր են։ Ճիշդ է, կառավարութիւնը իր վարմունքը արդարացնում է նրանով, որ անհրաժեշտ էր նախ խաղաղութիւն և անդորրութիւն վերահաստատել երկրում, ապա թէ հնարաւոր կը լինէր մտցնել մանիֆեստի խոստացած ազատութիւնները, բայց այդ խաղաղութիւնը վերահաստատելու համար նա դիմեց այնպիսի ծայրահեղ, և իրանց անգթութեամբ պատմութեան մէջ անօրինակ խիստ միջոցների, որոնցից շատ հեշտ կարելի էր խուսափել, եթէ միայն կառավարութեան նպատակն էր խաղաղութիւն հաստատել և ոչ տէրրօրի ենթարկել ազգաբնակութեան այն մասը, որ մասնակցել է ազատագրական շարժման։

Սակայն քաղաքական միւս կուսակցութիւնները, այն է լէգալ հողի վրա կանգնած կուսակցութիւնները, թէ աջակողմեան և թէ ձախակողմեան, այն կարծիքի են, թէ պէտք է գնալ Պետական Դումա և մասնակցել ընտրութիւններին։ Լէգալ կուսակցութիւնների մէջ ամենից ծայրահեղը և արմատական համարվողը սահմանադրական-ռամկավարական կուսակցութիւնն է, որ որոշել է անպատճառ մասնակցել ընտրութիւններին։ Պատասխանելով սօցիալ-դէմօկրատների առարկութեան, պրօֆէսօր Կեզեվետտէրը, իբրև սահմանադրական-ռամկավար չեշտեց, որ անհրաժեշտ է ունենալ քաղաքացիական քաջութիւն և պէտք է անպատճառ գնալ Դումա ու այդտեղ, նրա միջոցով ձեռք բերել ազատութիւնների երաշխաւորութիւնը։ «Դումայի դէմ բօյկօտ սարքելով, ասաց նա, սօցիալ-դէմօկրատները միայն սօցիալ-բիւրօկրատների հացին իւղ են քսում։ Մենք ասում ենք, որ Պետական Դուման կռւի ասպարէզ է ինքնակալ-բիւրօկրատիական կառավարութեան հետ։ Գնացէք ընտրութիւններին, գնացէք Դումա, իբրև վերջին կռւի»։

Պարզ է ուրեմն այս տեսակէտը։ Թէ սահմանադրական-ռամկավարների թէ պրօգրէսիստների և թէ նոյն իսկ ծայրահեղ կուսակցութիւնների ներկայացուցիչները խոստովանում են, որ Պետական Դումայի հաստատութիւնը այնուամենայնիւ մի յաղթանակ է, որ յեղափոխութիւնը տարաւ րէակցիայի դէմ։ Ի՞նչ միտք ունի ձեռքից բաց թողնել այդ յաղթանակը, կէս ճանապարհին մնալ։ Որքան էլ անկատար, բայց Պետական Դուման այնուամենայնիւ մի տեսակ ժողովրդական ներկայացուցչական հաստատութիւն կը լինի և եթէ հնարաւոր լինի ընտրել տալ ձեռնհաս, ազնիւ, շիտակ, իսկական հայրենասէր անձանց, չէ կարելի ասել, որ Դուման չը կարողանայ ազատագրական այժմեան ճանապարհի վրա էական մի քայլ չանել։ Գուցէ այդ քայլը գանգատ լինի, բայց նա այնու ամենայնիւ մի քայլ առաջ կը լինի։

Գալով այն հարցին, թէ մեր երկիրը Կովկասը ինչ դիրք պէտք է բռնէ այդ հարցի վերաբերմամբ, դրա մասին յաջորդ անգամ։

Շահրիար

ՍԵՆԱՏՕՐ Մ. ԿՈՒԶՄԻՆՍԿՈՒ ՏԵՂԵԿԱԳՐԻՑ

(Շարունակութիւն)

Պակաս ստարատ չը թւաց նրանց համար սօցիալ-դէմօկրատների տենդենցիան. գործադուլի ազատութիւն, նրանց անպատիժ թողնելը, խօսքի ընկերակցութիւնների ազատութիւնը։ Սակայն, նաւթագործների գործադուլների հետեւանքները հարկադրում են նրանց լուրջ կերպով մտածել. նրանք ոչ մի մասնակցութիւն չունեցան այդ գործադուլներում, բայց մինչդեռ, դրանց շնորհիւ, ստացան անըսպասելի յաւելումն իրանց ռոճիկների, համարեա թէ 20 տոկոս։

«Նրանք բոլորովին շփոթվել էին, չէին ըմբռնում այդ փաստի անյուէթիւնը բանւորական շարժման ընդհանուր ոգու հետ։ Պարսիկները շատ գեղեցիկ կերպով գիտէին, թէ ինչպիսի երկար ու ձիգ տարիների յամառ ու տաղտկալի աշխատանքի շնորհիւ միայն կարելի է լինում ռոճկի յաւելման հասնել։ Նրանք գիտէին, որ առանց խնդրելու, որը յաճախ երբեմն նոյն իսկ ստորացումն էր համարում, առանց սիրաշահելու և անձամբ դիմելու երբէք ռոճիկ չէր աւելացնվում և այն էլ ոչ բոլորին միասին, այլ առանձին անհատների միայն»։ Մինչդեռ նրանց աչքի առաջ կատարվեց իրական փաստը—բոլորի ռոճիկները աւելացրին հաւասար չափով և այն էլ մրքամ։ «Մինչև այդ ժամանակ լօյալ պարսիկների հոգեբանութեան մէջ, եթէ միայն լօյալութեան տակ կարելի է հասկանալ բաղդին կոյր կերպով հնազանդելը, սկսվեց խիստ փոփոխութիւն կատարվել. բանւորական շարժման զօրեղ ալիքը վերևից թափվելով, սկսեց ներս թափանցել մինչև բանւորական ծովի խոր յատակը։ Պարսիկ բանւորների յարաբերութեան մէջ դէպի շրջապատող կեանքը սկսում են երևալ գիտակցութեան նշոյլներ. նրանք խելացի կերպով սկսում են ըմբռնել։ Դանդաղ ու յամառաւ կերպով կընթանար այդ պրօցէսսը, եթէ որ պարսիկ բանւորները իրանք իրանց բաղդին թողնված մնային։ Ահա այդ բանւորական, ամենաստոր աստիճանի վրա կանգնած մասսայի ինքնաճանաչութեան զարթնելու ամենակարևոր վայրկեանում ասպարէզ են դուրս գալիս սօցիալ-դէմօկրատները»։ Նրանք սկսեցին համոզիչ կերպով աշխատել հասկացնելու այդ ամէն մասսային գործադուլների նշանակութիւնը և նրանց խաղացած կարևոր դերը աշխատանքի ու կապիտալի տնտեսական կռւի մէջ։ Նրանք ապացուցանում էին նրանց, որ ամբողջ բանւորութեան շահերը համերաշխ են և այլն։

«Եւ պարսիկ բանւորները, որ առաջ այն քան թերահաւատութեամբ էին վերաբերվում դէպի այդ տեսակ ճառերը, սկսեցին ուշադրութեամբ վերաբերվել նրանց և ըմբռնել նրանց իմաստը»։ Պարսիկ բանւորները սկսում են հետաքրքրվել իրանց ընկերների [illegible] ունենալ նրանց հետ։ «Ինչքան բան հասկանալի է, որ գործի այդ տեսակ ընթացքը դուրս հանեց պարսիկներին այդ անտարբեր դրութիւնից. պարսիկներն էլ զարթնեցին»։

Բացի տնտեսական բնաւորութիւն ունեցող այն պահանջներից, որ արել էին մայիսեան գործադուլին մասնակցող բոլոր բանւորները միասին, բանւորների փոքրամասնութիւնը, նրանց աւելի գիտակցութեամբ վերաբերվող մի մասը, առաջադրել էր բոլորովին որոշ քաղաքական բնաւորութիւն կրող պահանջներ։ «Ազատութիւն խօսքի, մամուլի, բանւորական միութիւնների, գործադուլների և ժողովների համար. պարտադիր մասնակցութիւն ունենան բանւորների կողմից ընտրված ներկայացուցիչները ինչպէս պետական գործում, այնպէս և կապիտալի ներկայացուցիչների մօտ». ահա դա է բանւորների բոլոր խնդրագրերի և պահանջների մէջ արտայայտված բառացի միտքը։

«Այդ տեսակ պահանջները,—ասում է սենատօրը,—յաճախ բացատրվում են բացառապէս հակակառավարչական կազմակերպութիւնների ազդեցութեամբ։ Ի հարկէ սօցիալիստները ագիտացիա են անում, բայց «հազիւ թէ դա հիմնաւոր և համապատասխան լինի իրերի իսկական դրութեանը, եթէ ենթադրենք, որ բանւորների այդ տեսակ յամառ ձգտումները հետևանք են գաղտնի կազմակերպութիւնների արած ագիտացիայի, իբրև բանւորական կեանքի համար անծանօթ և անպէտք գործօններ»։

Մանաւանդ սենատօր Կուզմինսկին եռանդով պահանջում է, իբրև անհրաժեշտութիւն, թոյլատրել բանւորական միութիւններ ստեղծելու, որոնք շաղկապող մարմիններ կը հանդիսանային։ Այդպիսի ազատ միութիւններ չը լինելն է պատճառը, որ բանւորները հարկադրված են լինում յաճախ դիմել մի այնպիսի ոչ ցանկալի մրցման ձևի, ինչպիսին գործադուլն է, «որը այժմ միակ մատչելի և, գործնական մոքով, նպատակին շատ հասցնող յայտնի ձևն է իրանց անբաւականութիւնը յայտնելու համար»։ Բանւորների սօցիալական և իրաւական դրութիւնը, ընդհանուր առմամբ, անհաստատ վիճակի մէջ է գտնվում ներկայ օրէնքների անբաւարար լինելու պատճառով, որոնք, որոշ իրաւունքներ չը տալով բանւորներին, մի և նոյն ժամանակ զրկում են նրանց յենարան ունենալու հնարաւորութիւնից, ոստիսին անհրաժեշտ է նրանց, որպէս զի կարողանան դրա շնորհիւ հաստատուն հող պատրաստել իրանց համար։ Մինչդեռ բանւորների մէջ հետզհետէ աճում է ինքնաճանաչութիւնը և շրջապատող կեանքի խելացի ըմբռնումը. բանւորների համար ամենևին գաղտնիք չէ, որ կառավարական իշխանութիւնը հնարաւորութիւն է տալիս կապիտալի ներկայացուցիչներին միանալ, օրինական ճանապարհով խորհրդակցել իրանց կարիքների մասին, որի շնորհիւ նաւթարդիւնաբերողները միաբան կերպով մշակում են գործողութիւնների համերաշխ ձևեր, երբեմն ուղղված հէնց այդ մի և նոյն բանւորների դէմ, որոնք անհրաժեշտ պայմանների շնորհիւ իրարից բաժան բաժան են գտնվում։ Այդ է պատճառը, որ բանւորների աւելի զարգացած, գիտակցական մասի մէջ բոլորովին բնականաբար հասունանում է ատելութեան զգացմունքը թէ դէպի իրանց տէրերը, [illegible] աշխատանքը և թէ դէպի կառավարչական իշխանութեան դէմ, որը մինչև վերջին ժամանակներս էլ դիմում էր րէպրէսսիաների, որովհետև բանւորների կազմակերպութեան խմբական արտայայտութիւնը ընդունվում էր, որպէս հետևանք անլէգալ կազմակերպութիւնների ունեցած ներգործութեան նրանց վրա»։

Բանւորական միութիւնները կարող էին եռանդուն աջակցութիւն ծառայել բանւորական կազմակերպութիւնների այսպէս զարգացման համար, նպաստել ընդհարումների վերջանալուն և տալ բանւորներին այն յենարանը, որին այնքան ջերմ և սպարդին կերպով ձգտում են նրանք պաշտպանելու համար իրանց շահերը և իրաւունքները գործարանատէրերի յաճախակի ոտնձգութիւնների դէմ։ «Առանց շնորհելու բանւորներին ազատ կազմակերպութիւններ ունենալու իրաւունքները, ասում է սենատօր Կուզմինսկին, չէ կարող խօսք անգամ լինել նաւթագործների կեանքի խաղաղ ու նօրմալ ընթացքի մասին»։ «Баку»

ԲԱԳՎԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

I

Փետրվարի 11-ին

Շաբաթ օրը, փետրվարի 11-ին Կասպից նաւատորմի նաւաստիների երկրորդ վաշտում անկարգութիւններ տեղի ունեցան, որոնց մասին կցկտուր տեղեկութիւններ առ այժմ պտտվում են։ Միայն այսքանը յայտնի է, որ անկարգութիւնները սկսած թօպէին գնդապետը խեղդի և եթէ խմաց է տալիս գեներալ-նահանգապետ Ֆաղէեին և վերջինս խեղդի կարգադրում է ամբողջ վաշտը զինաթափ անելու, բայց սպաները խնդրում են գեներալ-նահանգապետին փոխելու այդ կարգադրութիւնը և կալանաւորելու միայն նաւաստիների առաջնորդներին, թւով 3 հոգի...

Գեներալ-նահանգապետը համաձայնում է սպաների կարծիքին, բայց երբ կամենում են կալանաւորել այդ 3 հոգուն, ամբողջ երկրորդ վաշտը դիմադրութիւն է ցոյց տալիս և համաձայնվում է աւելի շատ զինաթափ լինել, քան թէ թոյլ տալ կալանաւորելու իրանց երեք ընկերներին... Ահա այդ պատճառով գեներալ-նահանգապետը կարգադրութիւն է տալիս կալանաւորելու ամբողջ վաշտը և կատար է ածվում առանց ընդդիմութեան նաւաստիների կողմից, զինաթափ է անվում ամբողջ վաշտը և կալանաւորվում են 30 հոգի, որոնց, բանտում և նրա բաժանմունքում տեղ չը լինելու պատճառով, տեղաւորում են մի առանձին զօրանոցում և պահապաններ նշանակում սամուրեան գնդի զինւորներից, սպաների առաջնորդութեամբ...

Դէպքի մասին գեներալ-նահանգապետը տեղեկութիւն է տալիս Կովկասեան Փոխարքային, կովկասեան ստրիկանութեան ընդհանուր կառավարչին և զինւորական մինիստրին։

Պէտք է ասել, որ Բագւի նաւատորմի նաւաստինները յայտնի են իրանց ազատամիտ հայեացքներով և լայն մասնակցութեամբ ազատագրական շարժման։

—

Մութ ոյժերը չեն դադարում գործելուց։

Մի քանի օր առաջ մի Թուրք մի արկղ ձկնեղէն է բերում և յանձնում երկաթուղու վարչութեամբ Եւլախ կայարանը հասցնելու համար մի ճ...ի անունով։ Ապրանքներ ընդու- [illegible] ընդունում է արկղը, առանց կասկածելու, բայց Թուրքը հեռանալուց յետոյ, երբ ուզում են արկղը տեղաւորել վագոնի մէջ, գլխաւոր գործակատարը նկատելով արկղի իր չափի համեմատ, անսովոր ծանրութիւնը, կասկածում է և ժանդարմական կառավարութեան միջոցով բացում է արկղը, որի մէջ գտնում են... մի քանի բերդանի հրացաններ և մեծ քանակութեամբ փամփուշտներ...

Լաւ էր, որ կայարանի վրացի գործակատարը շատ լաւ տեսել էր, որ ապրանք յանձնողը թուրք էր, թէ չէ պրօվոկատօրները հասնելու էին իրանց նպատակին, հայերի շլինքին դարձնել մի մեղք փոթթաթելու համար։

Վ. Թումանեան

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ

—

1906 թւի փետրվարի 13-ին։ Մենք ներքոյ ստորագրողներս, Երևան քաղաքի հայ և Թուրք ազգաբնակութեան ներկայացուցիչներս, կայացրինք մեր մէջ սոյն պայմանագիրը։

1) Մենք, Երևան քաղաքի ազգաբնակութեան լիազօրներս, Երևանի պ. նահանգապետի առաջարկութեամբ կազմեցինք մեր մէջ ժամանակաւոր մի մասնաժողով վերահաստատելու և պահպանելու համար խաղաղութիւն Երևան քաղաքում։

2) Յիշեալ նպատակը իրագործելու համար, մասնաժողովը նախ և առաջ մշակում և գործադրում է բարոյական միջոցներ՝ ազդելու ազգաբնակութեան վրա։ Ապա, եթէ Երևան քաղաքի սահմաններում չը կատարվեն ոչ և է յանցանքներ ազգայնական թշնամութեան հողի վրա հայերի ու Թուրքերի մէջ, այն ժամանակ այն ազգաբնակութեան մասնաժողովի անդամները, որին կը պատկանեն յանցաւորները, պարտաւորվում են երեք օրվայ ընթացքում, յանցանքի կատարուելուց սկսած, գտնել յանցաւորին, մանրամասն քննութիւն կատարել և արձանագրելով ներկայացնել Երևանի նահանգապետի կարգադրութեանը. մի և նոյն ժամանակ մասնաժողովի անդամները պարտաւոր են ցոյց տալ յանցաւորների տեղը և աջակցել իշխանութեանը կալանաւորելու այդպիսիներին։ Թեթև յանցանքների դէպքում, բայց և երբ կարող է ազգաբնակութեան մէջ յուզմունք առաջ բերել, մասնաժողովի կայացրած որոշումները, յանցաւորներին պատասխանատուութեան ենթարկելու համար, ներկայացնվում է Երևանի նահանգապետի բարեհայեցողութեանը։

3) Մասնաժողովը քննութիւն կատարելիս միաժամանակ որոշում է վարձատրութեան չափը կատարված յանցանքից վնասվածին կամ նրա ընտանիքին օժանդակելու համար համաձայն նրա նիւթական դրութեանը։ Այդ հիման վրա գնահատված գումարը մասնաժողովը բաժանում է Երևան քաղաքի ազգաբնակութեան համապատասխան մասի վրա, այսինքն այն ազգութեան վրա, որին պատկանում է յանցաւորը, իսկ յիշեալ գումարը հաւաքում են, մասնաժողովի որոշումը կայանալու օրից հաշվելով, երկու շաբաթվայ ժամանակամիջոցում, քաղաքային և ոստիկանական իշխանութիւնները։

4) Որպէս զի մասնաժողովը կարող լինի աջողութեամբ կատարել իր վրա դրված պար- [illegible] ներում կազմել մասնաժողովի անդամների աջակցութեամբ ընտրեալ մասնաժողովներ ազգաբնակութիւնը խաղաղացնելու համար։

5) Մասնաժողովը գտնում է, որ երկրի խաղաղացման գործին խոչընդոտ հանդիսացող պատճառներից մէկը քննութիւնների չափազանց դանդաղ կատարվելն է, ուստի նա անհրաժեշտ է համարում միջնորդելու, որպէս զի մասնաժողովի քննութեամբ հաստատված յանցանքները, որոնք կատարված են ազգային թշնամութեան հողի վրա, մասնաժողովի ներկայացնելուն պէս քննութեան ենթարկվեն արտակարգ կերպով։

6) Պրօվօկատօրական գործողութիւնների մէջ նկատված անձանց մասին, որոնք գրգռում են և յուզում ազգաբնակութեանը խաղաղութիւնը խանգարող լուրեր տարածելով, մասնաժողովի կայացրած որոշումը այդպիսի վնասակար մարդկանց պատասխանատուութեան ենթարկելու համար, ներկայացնվում է Երևանի պ. նահանգապետին մասնաժողովի գրաւոր միջնորդութեան հետ միասին։

7) Մասնաժողովի նախագահը քաղաքագլուխն է, որը և հրաւիրում է մասնաժողովի անդամներին հարկաւոր եղած դէպքում։

8) Վնասվածին վարձատրութիւն տալու հարցի քննութեան ժամանակ նիստերին նախագահում է Երևանի նահանգապետը։

9) Ի լրումն 2 յօդուածի, որոշեց, որ կատարվող բոլոր յանցանքները, անկախ իրանց շարժառիթներից, ենթարկվում են մասնաժողովի իրաւասութեան և վերջինս պարտաւոր է գտնել յանցաւորներին։ Բայց այն դէպքերում, երբ դատարանի և օրինական քննութեան միջոցով կը հաստատվի, որ յանցանքը մասնաւոր բնաւորութիւն է կրում և չէ պատկանում այն յանցանքների թւին, որոնք կատարվում են ազգային թշնամութեան հողի վրա, այն ժամանակ մասնաժողովը ազատ է համարվում այն պատասխանատուութիւնից, որ դրված է նրա վրա սոյն պայմանագրի 3-րդ յօդուածով։

Մասնաժողովի նախագահ Երևանի քաղաքագլուխ Իվ. Մ. Աղամալեանց, Փանահ-խան Մակինսկի, Գերասիմ Գէորգիևիչ Կամսարական, Գրիգոր Տէր-Աւետարանեանց, Աւետիս Նազարովիչ Տէր-Աւետիսեանց, Կ. Մամէդ Ալիէվ, Աղախան Էրիվանսկի, Վասիլ Եղիազարով, Միր-Աբաս Միր Բաբայեվ, Ալէքպեր Իսմայլօվ, Աբասկուլի բէկ Հաջիբէկլինսկի, Ա. Գաւրիլօվ։

ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՈՒ ԱՀՄԷԴ ՌԻԶԱ ԲԷՅԸ

—

Մենք՝ «Մշակի» նախընթաց համարներից մէկում խօսել ենք Պարիզում հրատարակվող Երիտասարդ-Թիւրքերի օրգան «Mechveret»-ի և նրա խմբագիր Ահմէդ Ռիզա բէյի մասին։ Ռիզա բէյը Երիտասարդ-Թիւրքերի ամենայայտնի և ամենահին պարագլուխներից մէկն է, որը ծանօթ է եւրոպական քաղաքականութեան, և ունի նոյն իսկ բաւական հեղինակութիւն և անուն Պարիզի հասարակական և քաղաքական գործիչների որոշ շրջաններում։ Ահմէդ Ռիզա բէյը համոզմունքով դրապաշտ է, պօզիտիվիստ, և եթէ չեմ սխալվում անդամ Պարիզի պօզիտիվիստների ակումբին։ «Mechveret»-ի խմբագիրը այն Երիտասարդ-Թիւրքերից է, որոնք իրանց խիղճը ծախու հանել [illegible] մասին անհրաժեշտ է սակայն անել մի քանի լուրջ վերապահումներ։ Որ Ահմէդ Ռիզա բէյը չէ ծախվել Կարմիր Սուլթանին, այդ ապացուցանում է նրա երկարամեայ գործունէութիւնը և իր հրատարակութիւնը, որ մտել է արդէն իր XII-րդ տարեշրջանի մէջ։ Տասներկու տարի շարունակ Ռիզա բէյը կռիւ է մղել սուլթանական րէժիմի դէմ, բայց կռիւ մղել այն սահմաններում, որ թոյլ է տալիս հէնց նրա օրգանի նշանաբանը «Ordre et Progrès»—Կարգ և Առաջադիմութիւն։—Նա չունի այն խրոխտ, մարտական, շանթայից լեզուն, որ գործ է ածում, օրինակ, մի Աբդուլլահ Ջէվդէթ, և մանաւանդ նրա կռիւը՝ Եըլդըզի ճիւաղի դէմ, սահմանափակվել է միայն խօսքերի աւելի կամ պակաս դատարկ շրջանի մէջ։ Եւ դրա համար էլ, նրա ջանքերը, իր իսկ խոստովանութեամբ յանգել են խղճուկ արդիւնքների։

Նկատի ունենալով, որ այժմեան Երիտասարդ-Թիւրքիան, ինչ որ էլ լինի, վաղվայ ձայնատարն է օսմանեան հայրենիքում, մենք պիտի ջանանք մեր ընթերցողներին տալ այդ շարժումի այլ և այլ հոսանքների մասին, որքան հնարաւոր է մանրամասն տեղեկութիւններ։ Մենք շուտով, մի այլ յօդուածում, կը խօսենք հէնց «Mechveret»-ի խմբագրի դաւանած սկզբունքների և նրա ընդունած քաղաքական պրօգրամի մասին։ Առ այժմ ներկայացնենք նրա մի յօդուածը՝ «Ջարդերը Կովկասում», որ լոյս է տեսել «Mechveret»-ի յունվարի համարում։

«Թիֆլիսից և Բաթումից հասած լուրերը մեզ ասում են, որ մահմեդականների ջարդը հայերի ձեռքով՝ շարունակվում է ամբողջ Կովկասում։ Եւ ինչ որ տարօրինակ կերպով ծանրացնում է իրերի դրութիւնը, այն է, որ ջարդը ստացել է հսկայական չափեր, և կատարվում է մանաւանդ ռուսական ոստիկանութեան և իշխանութիւնների մասնակցութեամբ։

Ռուսաստանում կատարվում է աւելի լաւը. դա աւելի modern style—մօդեռն եղանակ է. հայերն են, որ պարտաւորութիւն են վերցրել իրանց վրա մաքրագործելու իրանց մահմեդական հայրենակիցներին։

Հասկանալի է թէ ինչ ճարպիկութեամբ, ինչ զուարճութեամբ Կովկասի հայերը, որոնք ատելով ատում են այն բոլորը ինչ որ Թուրք է, պէտք է կատարեն իրանց յանձն առած աշխատանքը։

Բայց այդ մարթասպանները գիտակցում են արդեօք այն քաղաքական դերը, որ խաղալ է տալիս նրանց ցարի կառավարութիւնը։ Մոռանում են արդեօք, թէ Թաթարները, որ յարձակվեցին իրանց վրա, նոյնպէս գրգռված էին այդ մի և նոյն ռուս ոստիկանութեան և մի և նոյն իշխանութիւնների կողմից։ Իրանց մտքի խաւարի մէջ, բանականութեան մի ճառագայթը հերիք էր նրանց ցոյց տալու համար լարված ստրատեգի թակարդը, և հասկացնելու, որ այդ կոտորածները միայն մի ընդհանուր նպատակ ունեն—ջարդերով փոխադարձաբար բնաջինջ անել միմեանց։

Այն բոլոր գեղեցիկ ֆրազներները, այն բոլոր խաղաղասէր պօլիտիկանները, այն բոլոր սօցիալիստները, որ մարդկութեան, մարդասիրութեան և ազգերի եղբայրութեան անունով են միայն երդվում, պիտի թողնեն արդեօք, գոնէ մի առ ժամանակ, բառերի և գաղափարների իրանց թշուառ կռիւները և պիտի գործ ածեն իրանց տրամադրած անսահման ոյժերը արգելելու համար երկու հարևան ժողովուրդների արիւնոտ ու վայրագ խոսր կռիւները ի մեծ շահ մի միապետի։

Բայց իրաւամբ մեզ պիտի պատասխանեն, թէ որ և է պետութիւն—կարդացէք մինիստրական յայտարարութիւնները—ի-

---

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԵՒՐՈՊԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ*)

(Ա. Ամֆիտէատրովի)

—

Զարհուրելի դէպքերը, որոնք տեղի ունեցան Անդրկովկասում, նորից առաջ քաշեցին և լուսաբանեցին Եւրոպայի համար չարաբաղդ հայկական հարցը։ Նախ Թուրքական, իսկ հիմա կօզակների անգթութիւնները ռուսական սահմանից այս կողմն անցկացրին Աբդուլ-Համիդի հարևան պետութեան բարքերն ու քաղաքականութիւնը և մի և նոյն ժամանակ սուլթան Աբդուլ-Համիդի զօրքերը մօտեցան ռուսական սահմանին ու կանգնեցին այնտեղ անխոյանալի կերպով սպառնական դիրք ընդունելով։ Կուրացած կամայականութեամբ և ազգայնական նախապաշարմունքներով, անմոռէն օժտված լիազօրութիւններով՝ կովկասեան իշխանութիւնը, լիապէս օգնութիւն և խրախոյս գտնելով Պետերբուրգի աւելի ևս կոյր և իր գլուխը կորցրած կենտրոնի կողմից, անըստելի կերպով դաշնակից դարձաւ իր ամենախորամանկ և ամենավտանգաւոր թշնամիներից մէկին՝ ընդդէմ ծայրագաւառային ազգաբնակութեան դեռ քիչ ժամանակառաջ ամենից աւելի խաղաղ, օգտակար և թերևս ամենից աւելի պահպանողական մի ազգային խմբի։

Ես շարունակ երկու տարուց աւելի ապրել եմ արտասահմանում, մեծ մասամբ Պարիզում, և այդ ժամանակամիջոցում շատ եմ եղել ռուսահայերի հասարակութեան շրջանում և շփվել այդ կամայ կամ ակամայ էմիգրանտների հետ։ Նրանք մեծ համակրութիւն են վայելում Եւրոպայում։ Այստեղ Անդրկովկասեան խժդժութիւններից ստացվող տպաւորութիւնը խորն է և տխուր է առհասարակ մեծ զայրոյթ, իսկ վերաբերմունքը դէպի ռուսական քաղաքականութեան քաօսական տատանումները հայկական հարցի մէջ—եթէ միայն կարելի է այդ արիւնալից անմտութիւնը քաղաքականութիւն համարել—չափազանց ցասկոտ ու արհամարհական է։

Բաւական է ասել, որ ատապող հայութեան պաշտպաններ հանդիսանում են Պարիզում այնպիսի անձինք և հեղինակներ, ինչպիսիք են Ժան Ժօրէս, Կամիլ Պէլտան, Ֆրանսիս Պրէսանսէ, Անատոլ Ֆրանս. ուրեմն և դժուար չէ երևակայել այն մրրկալից շանթերը, որոնցով նրանք տեղում են ռուսական բռնութիւնները իրանց ճառախօսական ամբիոնից։ Աւելորդ է ասել, որ ռուս մամուլը, ծանօթանալով հայ էմիգրանտների հետ, չէ կարող նրանցից զուրկեան հաճոյախօսութիւններ և փաղաքշանք սպասել, որոնք շոյէին նրա ազգային ինքնասիրութիւնը. և ինչ յոյսով պէտք է սպասէ.—արժանի չէ։ Բայց ես շատ անգամ զարմացած եմ մնացել՝ տեսնելով այն քաղաքական տակտը, որով նրանք վերաբերվել են Անդրկովկասեան անմտութիւններից ստացված տպաւորութիւններին, այն փորձառու և դժուարին խոհեմութիւնը, որով նրանք իրանց ազգային սուգի և թշուառութեան արտայայտութիւնը ենթարկում են ապագայի հեռաւոր միտումներին։ Ապշեցնում էր ինձ և այն հանգամանքը, որ այսպիսի մռայլ և խառնափնթոր ժամանակ, երբ մի կողմից տեղական գնահատելի չափազանցութիւնները, միւս կողմից ռուսաց քաղաքական սխալները, երրորդ կողմից ռուսաց պատերազմական անյաջողութիւնները և չորրորդ կողմից ռուսական ներքին խռովութիւնները հաւասարապէս գայթակղեցնում են կարծես յեղափոխական տրամադրութեամբ համակված խմբերին ի լուր աշխարհի յայտարարել ուՌուսաստանի լիակատար կործանումը, նրա պետական միութեան անդամահատումը և պատմութեան ընթացքում նրա նուաճած ազգերի առանձնացումը,—հայ էմիգրանտները, քիչ բացառութեամբ, ամենևին չէին հրապուրվում այսպիսի հեռանկարով։ Ուղիղ է, վրէժառու չարանենգութեան ռօպէական բռնկումներ երբեմն նկատվում էին, որպէս արդար հառաչումի վերածված ազգային բնազդի, սակայն ազգային բանականութիւնն և խելքը, հակառակ սանձարձակօրէն մրրկվող տարրերի, անընդհատ կրկնում և յիշեցնում են հայերին միշտ մի և նոյն բանը—այն, որ նրանց կապը Ռուսաստանի հետ պատահական չէ, այլ օրգանական։ Այդ կապը հանդուցել է պատմութիւնը, որպէս հայ ժողովրդի ապահովագրութիւն մահմեդականութեան հոսանքից ոչնչանալու դէմ։ Քանդել նրան անկարելի է—դա կը լինէր ազգային ինքնասպանութիւն։ Այն անհանդուրժելի անմաչքները, որոնք ստեղծվեցին հայ ժողովրդի համար վերջին երկու տասնամեակի ռուսացման քաղաքականութեամբ, և որոնք, իբրև պատասխան, ստեղծեցին այժմեան յեղափոխական շարժումը, միայն ժամանակաւոր չարիք են, որոնց մէջ Ռուսաստանը, որպէս ռուսաց ժողովրդի կամքի և գործունէութեան ամբողջութիւն, մեղաւոր չէ։ Անիրաւ կը լինէր, որ ազգին ամբողջութիւնը պատասխանատու համարվէր իր չնչին, թէպէտև պատահմամբ իշխանութիւն ունեցող, մասի պատճառով։

Յեղափոխութեան փոթորիկը, որ այժմ տակն ու վրա է անում Ռուսաստանը, ստեղծում է նրա մէջ մի և նոյն ժամանակ նոր կարգ ու կանոն, նոր հիմքերով և պետական կեանքի նոր ընթացքով, որոնց հետ միասին չեն կարող և չը պէտք է գոյութիւն պահպանեն ծայրագաւառային հին չարիքները։ Հայ ժողովուրդը լի է խելացի համբերատարութեամբ։ Հայերը շատ լաւ ճանաչում են իսկական մեղաւորներին, նրանց, որոնք ստեղծեցին Անդրկովկասի այժմեան թշուառութիւնները, և գիտեն, թէ իրանց առերևոյթն ու ժողովրդական զայրոյթը ում վրա պէտք է կենտրոնացնել. նրանք այդ զայրոյթը չեն ուղղում ընդհանրապէս ռուսների և Ռուսաստանի ամբողջութեան, որպէս նոր կազմակերպվող պետական մի դաշնակցութեան դէմ, այլ արդարացի կերպով ուղղում են նրանց դէմ, որոնք արժանի են դրան։ Ընդհակառակը՝ տաք Աստուած, որ Ռուսաստանի պետութեան հետ կապված ամէն մի ցեղի մէջ գոյութիւն ունենայ ազգային փոխադարձ պաշտպանութեան անհրաժեշտութեան, ռուսների և հայերի հաւատարիմ և հաւասար դաշնակցութեան այնպիսի խոր գիտակցութիւն, որպիսին ես տեսայ Պարիզի հայ էմիգրանտների շրջաններում։ Այդ շրջանները չափազանց աշխոյժ են, գործունեայ և հետաքրքրական։ Նրանց աշխատանքը, որ դրված է միջազգային հիմքի վրա, չունի իր մէջ ոչ մի գաղտնիք ոչ նպատակի և ոչ միջոցների վերաբերմամբ. դա սիստեմատիքական, բաց-աշկարայ մաքառում է օսմանեան պետութեան դէմ եւրոպական հասարակական կարծիքի աջակցութեամբ։

(Կը շարունակվի)

ԹՈՒՐՔԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ՅՕԳՈՒՏ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ

—

Անցեալ և ներկայ արիւնոտ տարեշրջանում մեր Թուրք հարևանները շարունակ ճիգեր էին թափում կառավարութեան առաջ բացատրելու հայ-թուրքական ընդհարումների շարժառիթը։ Թուրքերի ներկայացուցիչները կամ, աւելի ճիշտն ասած «աղաւիկները», տեղական «անուշառ» ադմինիստրատօրների առաջ (ինչպէս մենք ականատես եղանք Ալիխանովին տուած Թուրքերի ցուցմունքին անցեալ տարվայ մայիսի 25-ին Ջահուկ գիւղում, Հին-Նախիջևանի գաւառ) պնդում էին հետևեալը։ «Հայերը իրանց համար մի կամպանիա կազմեցին «Ֆիդայի» անունով, հիմնեցին գաղտնի թագաւորութիւն, կազմակերպեցին զանազան վարչական հիմնարկութիւններ, ընտրեցին թագաւոր և մեզանից էլ պահանջեցին հպատակվել իրանց թագաւորին. բայց մենք Թուրքերս չընդունեցինք կատարել մի այդպիսի անմիտ պահանջ։ Հայ-ֆիդաները զայրացած մեր յամառ մերժումից՝ յարձակվեցին մեզ վրա, բայց մենք յաղթող դուրս եկանք և կոտորեցինք հայերին»։

«Մշակը» իր անցեալ տարվայ № 192-ում «Շարժառիթը» վերնագրով առաջնորդող յօդուածի մէջ գրում է.

—Մեր Թուրք հարևանները ընդհարումների շարժառիթները բացատրում են հետևեալ կերպով. Թուրքերի ներկայացուցիչները մի քանի անգամ յայտնեցին, որ հայերի մէջ գոյութիւն ունեցող գաղտնի կազմակերպութիւնները, որոնք (ըստ իրանց կարծիքի) դէմ են գնում կառավարութեան, գրգռել են Թուրք ժողովրդին, որը ցանկանում է լինել բարի հպատակ։ Այդ պատճառով էլ Թուրքերը վճռել են զէնքի դիմել և ճնշել հայ-յեղափոխական տարրերը յօգուտ Ռուսաստանի...

«Մշակի» ներկայ տարվայ № 7-ում Գանձակից ուղարկած «բացարձակ մի յայտնութիւն» վերնագրով թղթակցութեան մէջ կարդում ենք մի ինչ-որ երդուեալ հաւատարմատար հայ-թուրքական խաղաղարար յանձնաժողովի ազդեցիկ անդամ՝ Ալակպեր Խասմամեդովի ռուս օֆիցէրների առաջ արտասանած զառանցանքը Գանձակի երկաթուղային կայարանում։ Յիշեալ ազդեցիկ Թուրքը բողոքել էր օֆիցէրներին՝ կայարանում կանգնած զինւորների դէմ, որոնք իրանց հրացանների սուիններով հարուածներ էին հասցրել նրա գլխին, պոռալով. «ծեծեցէք Թուրքերին»... Եւ այդ բողոքի մէջ Թուրքը բացարձակ յայտնել է, որ Թուրքերը թագաւորի բարի հպատակներն են, նրանք կռւում են նրա թշնամիների՝ հայ-յեղափոխականների դէմ ռուսաց արքայական գահը անսասան պահելու համար։

Տեսնենք այժմ ինչով է բացատրում Թուրք մամուլը, երևի մի զուռնայ էլ նա է փչում։ Բոլորին յայտնի Թուրքերի «Հայաթ» լրագիրը իր անցեալ տարվայ № 62-ում (արտատպած «Баку»-ից «Մշակի» նոյն № 192-ում) այդ ընդհարումները բացատրում է այս տեսակ.

—Ինչ նպատակի որ ձգտում են մակեդօնացիները իրանց հայրենիքում, նոյն նպատակին ձգտում են հայերը Կովկասում. հայերը ցանկանում են Կովկասում ստեղծել անկախ պետութիւն. այդ ծրագրի լուծման փորձը նրանք գործադրեցին մուսուլմանների վրա, յայտարարելով նրանց պատերազմ։

Այդ տեսակ զառանցանքները կարող են համոզիչ լինել միայն Թուրք խալիֆանի խելքին համեմատ պօլիցեական չինովնիկների համար։

Թուրքերն այդ տեսակ զառանցում են լոկ միայն նրա համար, որպէս զի արդարացնեն ադմինիստրատօրների առաջ իրանց արդար դուրս բերեն, և այդ տեսակ զառանցանքներ թելադրողները հէնց իրանք ադմինիստրատօրներն են, մանաւանդ Թուրք չինովնիկները, որոնք ադմինիստրացիայի «հալանչի փանլըվաններն են» կամ նրա պոչն ու ականջը։ Այդ բանին, որպէս ապացոյց, առաջ բերենք մի օրինակ Ալիխանովի հարցաքննութիւնից, անցեալ մայիսի 25-ին Ջահուկում։

—Ջահուկցի ֆիդաները ձեզ հօ բան չէին սովորեցնում, հարցնում էր Ալիխանովը մի Թուրքից։

—Գեներալը ողջ լինի, ֆիդաները մեզ նշանութիւն էին տալիս, մեզ չարչարում էին...

—Տօ ես քեզանից հարցնում եմ, ֆիդաները ձեզ հօ բան-ման չէին սովորեցնում։

Թուրքը չշփոթված էր կրկնել իր նոյն պատասխանը։

—Հեռացիր աչքիցս, զայրացաւ Ալիխանովը. դու, ինչպէս երևում է, խելօք մարդ չես, և դառնալով Թուրք ամբոխին, հարցրեց. ով է ձեզանից խելօքը, թող դուրս գայ և իմ հարցերին մարդավարի պատասխան տայ։

Ամբոխի միջից դուրս եկաւ մի ուրիշ Թուրք։ Ալիխանովը դարձաւ դէպի նա.

—Հալալ, աղանեակս, դու ասա, տեսնեմ, օրինակ այդ Ջահուկցի ֆիդաները ձեզ հօ չէին առաջարկում միանալու իրանց հետ ռուս կառավարութեան դէմ ապստամբելու համար։

—Բալի, բալի, գեներալը ողջ լինի, առաջարկում էին, շտապով պատասխանեց Թուրքը։

—Այ, ես տեսնում եմ, որ դու խելօք մարդ ես...

—Եւ Ջահուկցի Թալանված ու արիւնաքամ եղած հայերը Ալիխանովի աչքին մեղաւոր դուրս եկան, որովհետև նրանք առաջարկում են եղել Թուրքերին միանալու իրանց հետ ռուսաց կառավարութեան դէմ միացեալ ոյժերով ապստամբելու համար (?!).

Թուրքերի շարժառիթների այդ տեսակ ցնորք բացատրութիւններին «Մշակը» իր վերոյիշեալ համարի նոյն յօդուածի մէջ ի միջի այլոց պատասխանում է.

—Եւ ինչու մի ժողովուրդ, որ այնքան կրթված և պատրաստ չէ, ինչպէս Թուրք ազգաբնակութիւնն է, պիտի վերցնէր իր վրա մի այդպիսի ծանր պարտաւորութիւն և ինչու անպատճառ հայերի վերաբերմամբ։ Ռուս ժողովուրդը ինքը ներկայումս ունի ծայրայեղ յեղափոխական և ծայրահեղ պահպանողական տարրեր։ Նոյնը տեղի ունի և միւս ազգութիւնների մէջ։ Եթէ Թուրք գործողները իրանց վրա վերցնեն մի պարտաւորութիւն—զսպել հակակառավարչական տարրերը, մի և նոյն ժամանակ այն տեսակէտը ունենային, թէ այն ազգերը, որոնց մէջ կան յեղափոխական կազմակերպութիւններ, հակակառավարչական են և վերջնայէս ցանկանային կոտորածներով և հրդեհներով նրանց խելքի բերելու, այն ժամանակ նրանք պէտք է կռիւ հրատարակէին թէ ամբողջ ռուս ազգին և թէ պետութեան մէջ ապրող բոլոր ազգութիւններին։

Սակայն յարգելի լրագիրը վրիպել է այն չէշտակի պատասխանից, որը տրամագծօրէն հակառակն է Թուրքերի այդօրինակ բացատրութիւններին։

Նախ քան հայ-Թուրքական ընդհարումների ծաւալի լայնացումը, այսինքն քանի դեռ Բագուի փետրուարեան դէպքերը ուրիշ գաւառներում արձագանք չէին գտել, ամէն տեղ հնչվում էին եղբայրասիրութեան ձայները, եկեղեցիներում և մզկիթներում արտասանվում էին յանուն համերաշխութեան կրակոտ քարոզներ, հազարաւոր բերաններից նզովվում և անարգվում էր չէլքոնը, Թուրքերի աչքին հայերը ոչ հակակառավարչական տարրեր էին համդիսանում, ոչ էլ գաղտնի հայկական թագաւորութիւնը գոյութիւն ունէր. բայց հէնց որ աղէտները սկսվեցին Նախիջևանում և ուրիշ կողմերում, այն ժամանակ Թուրքերի աչքի առաջ այդ բոլորն էլ դուրս ցցվեց։

Բայց թողնենք այդ բոլորը և ընդունենք, որ Թուրքերի այդ տեսակ աւարաութիւնները, յարձակումները նշանակում են ճնշել հայ-յեղափոխական տարրերը յօգուտ Ռուսաստանի։ Թողնենք մի կողմ նաև հայերի կոտորածները և նրանց գիւղերի աւերումները և դառնանք մի րօպէ քննելու Թուրքերի այն ծրագիրը, որով կամենում են նրանք զէնքի ուժով ճնշել հայերին, որպէս հակակառավարչական տարրերի, յօգուտ Ռուսաստանի։ Անցեալ օգոստոսի Շուշիի ընդհարումների ժամանակ Թուրքերը սպանեցին 11 ռուս զինւոր, այրեցին քաղաքային դուման, նաւթարար դատարանը, բազմաթիւ խանութներ ու տներ, Բագւում ընդհարվեցին զօրքի և հայերի հետ, որից կառավարութիւնը ստիպված բաւարիա գործ դրեց, զրկեցին գանձարանը միլիոնաւոր եկամուտից... և դա յօգուտ Ռուսաստանի էր։

Գանձակի նահանգում Թուրքերն աւերեցին երկու ռուս գաղթականների գիւղեր, յարձակումների ժամանակ դուրս էին գալիս համիդիամութեան կանաչ դրօշակով «Թող կորչեն գեավուրները, կեցցէ իսլամը և կեցցեն նրա հետևողները» մակագրութեամբ, ջարդում էին եկեղեցիները և անպատւում նրա միջի սրբութիւնները... Եւ դա յօգուտ Ռուսաստանի էր։ Այնուհետև Թուրքերն սկսեցին երկաթուղիների կայարաններում յարձակվել ռուս ծառայողների և ապրանքատար վագոնների վրա կողոպուտի նպատակով, յարձակվել գաւառներում ռուս զինւորների վրա զէնքեր խլելու նպատակով։ Անցեալ նոյեմբերի 1-ին Հին-Նախիջևանի Փայիզ գիւղի մօտ Թուրքերը զինւորներից խլեցին հինգ հրացան, իսկ ամսի վերջերին Ջիմարասարի Թուրքերը սպանեցին երկու կօզակի և խլեցին նրանց հրացանները, որի պատճառով կօզակները նախ աւերեցին այդ գիւղը և ապա այրեցին Նախիջևանի Թուրքաց մեծ շուկան։

Նոյեմբերի 29-ին Ջահուկի Թուրքերը յարձակվեցին գիւղի պահակախմբի վրա ռուս զէնքեր հափշտակելու համար, որի հետևանքը եղաւ Ջահուկի աւերումը... Եւ այդ բոլորը նշանակում է ճնշել հայ-յեղափոխական տարրերը յօգուտ Ռուսաստանի։

Հիանալի ծրագիր. մի այդպիսի լաւութիւն՝ Ռուսաստանի շահերը պաշտպանելու համար, միայն Թուրքերի նման կուլտուրական մի շնորհքով ազգ կարող է անել։

Ամբողջ Ռուսաստանի հակաբիւրոկրատիական շարժումը թաշկինակով է կապել կառավարիչ ադմինիստրացիայի աչքերը, որ չէ նկատում պօլիցիայի մութ ուժերին՝ հայերի դէմ պրովօկացիա առաջ բերելու համար. կազմած հրէշաւոր ծրագրի տակից դուրս է ցցվում երևանի տարվայ խնամքով մշակված մի ուրիշ աւելի զօրեղ ծրագիր, ուղղված դուգէ հէնց ադմինիստրացիայի և պօլիցիայի դէմ, որը երբեմնակի արտայայտվում էր հայկական կոտորածի դիմակի տակ, ինչպէս վերև յիշեցինք, յարձակումներով ռուսաց զօրքի վրա։

Այդ երկրորդ թաքնված ծրագիրը անբերեալ հսկայական մի վիշապ է, որ իր մահաբեր երախը բաց է արել Կովկասի քրիստոնեայ տարրերի դէմ, իսկ նրա երկար ու անծայր պոչը, ճեղքելով Փոքր-Ասիան, Բոսֆորի ափերը, անցնում է լուսաւոր աշխարհի միջով դէպի հիւսիս-արևմուտք և հասնում մինչև Բեռլինի արքայական պալատները։

Գիրանի

---

*) «Вѣкъ» № 40

բաւունք չունի մի ուրիշ պետութեան ներքին գործերին միջամտելու:

Այդ կանոնը բացառութիւն թոյլ է տալիս միայն այն դէպքում, երբ գործը Թիւրքիայի հետ է. այն ժամանակ կարելի է ոտնակոխել մարտանաւեր, կարելի է ցամաք հանել նաւաստիներ օսմանեան հողի վրա, կարելի է գրաւել, խլացնել: Բայց գոնէ դա արդարութեան և մարդկութեան նպատակով է:

Ո՛չ. Այլ պաշտպանելու Տիւրինի և Լօբանդօնների դրամարկղը կամ քաջալերելու համար Մակեդոնիայում աւստրօ-ռուսա-բուլղարական ինտրիգները»:

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, Րիզա-բէյի ակնարկած լուրերը թխվել էին Կովկասի օսմանեան հիւպատոսարանների թելադրութեամբ: Անժէդ Րիզա բէյը վրդովվել է Թուրք-հայկական ջարդերից մանաւանդ նրա համար, երևի, որ հայերը պաշտպանողականից անցել էին յարձակողականի: Նա վրդովվել է, որ հայերը ջարդվելուց յոգնած, զայրացած, սկսել էին ջարդել: Մենք ասել ենք ու դարձեալ ասում ենք, դարձեալ աղաղակում ենք, որ մեզ համար մի կատարեալ դժբաղդութիւն է, անփոփոխելի ցաւ՝ ձեռք բարձրացնել այն ժողովրդի վրա, որի հետ ապրել ենք դարերով, մի և նոյն բարին ու չարին ենթակայ: Մեզ համար մի կատարեալ դժբաղդութիւն, է մի անփոփոխելի ցաւ՝ աւերել, քանդել այն մարդկանց, որոնք՝ հոգով համոզված ենք, տուժում են իրանց տգիտութեան, իրանց մտաւոր, հոգեկան, տնտեսական թշուառութեան շնորհիւ:

Բայց ինչ անել, ինչպէս անել: Ո՞ր քարին տանք մեր գլուխը, երբ մեզ չեն հասկանում, երբ չեն հասկանում այն, ինչ լոյսի պէս պարզ է ու կուրացուցիչ,—որ այս եղբայրասպան կռիւները՝ երկու տառապող ժողովուրդների դասակարգային և բաղաքային թշնամիների սարքած խաղը, ուրիշ նպատակ չունեն, բայց եթէ իրանց առաջ բերած աւերով ապահովել նոյն թշնամիների դասակարգային, քաղաքական շահերը:

Մենք ըմբռնում ենք այս բոլորը: Բայց ինչ անենք, ինչպէս անենք: Ո՞վ պէտք է ըմբռնել տայ և այս բոլորը Թուրք ռամկին գիւղացիութեանը, որպէս զի նա իր զանազան բէկերի առաջնորդութեամբ և զանազան մոլի գրքոյներով չը յարձակվի իր վիճակակից հայ եղբայրների վրա, սաբէ չը տայ նրանց արդար, բայց այնուամենայնիւ ողբալի վրէժխնդրութեան: Իսկ ինչ վերաբերում է ռուսական իշխանութիւնների թշնամական վերաբերմունքին դէպի Թուրքերը, այդ հարցրէք Մենքենոններ սարքող Սադըղ, Իդրիս բէգերին...

Տ. Զաւէն

ՄԵՐ ՊԱՐՏՆ Է ՀՈԳԱԼ

Հայի արիւնոտ պատմութեան էջերում մարտիրոսութեան մի տարի էլ աւելացաւ:

Ո՞վ կարող էր սպասել, որ քսաներորդ դարումս, քրիստոնեայ մի պետութեան մէջ, կը սկսվի մի այնպիսի վանդալական, աշխարհաւէր արշաւանք, որի մօտ նսեմանում Լանգթամուրների ու Չինգիզխանների փառքն անգամ:

Ո՞վ կարող էր մտածել, որ օրը ցերեկով կատարված աւազակութիւնները, մարդասպանութիւնները, քաղցնելի վայրենութիւնները, մարդիկ բռնի հաւատափոխ անելը, անպատիժ կը մնան:

Ո՞ւմ մտքով կանցնէր, որ խաղաղ, աշխատասէր ժողովրդի քրտնաջան աշխատանքը, չարքաշ կեանքի բարգաւաճ ստեղծագործութիւնը հարամիների բաժին կը դառնար. կը խլէին նրանից իր կոշտացած ձեռքերով դաստած արդար վաստակը, իսկ իրան տսարբիկ, մերկ ու քաղցած, մուրացկանի ցուպ տալով, դուրս կը վռնդեն հայրենի օջախից:

Անկարելի բան է, չէ՞: Անհաւատալի է թւում, սակայն դրանք անժխտելի փաստեր են, կատարված իրողութիւններ են:

Ո՞ւր պէտք է դիմել: Ո՞ւմ բողոքել:

Միթէ կառավարութիւնը այդ բոլոր կատարված ոճիրները չէ տեսնում:

Միթէ նրան յայտնի չեն մարդասպանները, աւազակները:

Արդեօք քաղաքական բարդութիւններից է նա խուսափում, որ լուռ է մնում և, նոյն իսկ, շոյում այդ ոճրագործներին:

Դա գաղտնիք է, մութ և անհասկանալի մեզ համար:

Մենք տեսնում ենք միայն, որ արդարադատութիւն չը կայ, որ օրինական պատասխանատուութիւնը ոճրագործների համար չէ գործադրվում:

Միևնոյն յանցանքի համար հայը, կամ նրա փոխարէն ամբողջ գիւղը, պատժվում է, իսկ Թուրք ոճրագործները՝ ոչ: Նրանց հնարովի գանգատները ուշադրութեան են արժանանում, իսկ մեր արդար բողոքը անհետևանք մնում:

Ի՞նչ է պատճառը: Միստիֆիկացիա չէ արդեօք: Ո՞րեւէ ինչ անել: Ո՞ւմ դուռը բաղխենք մեր ծով դարդերին դարման անելու: Կառավարութեան համար մենք խորթ զաւակներ ենք, հէչ փոյթ չէ նրան թէ մենք կը կորչենք: Իսկ ծայրահեղ կարիքը չոքել է մեր կրծքին. քաղցած ենք ու մերկ, օթեանից զուրկ. խոպան մնացին մեր արտ-հանդերը, մշակելու համար ոյժ, սերմ չը մնաց, մինչդեռ էլ չունենք վերսկսելու մեր չարքաշ, գիւղական կեանքը: Մինչդեռ դա մեր գոյութեան ամենաանհրաժեշտ պահանջն է: Ո՞վ պէտք է բաւարարութիւն տայ: Ո՞ւմ պարտքն է հոգալ:

Մի ամբողջ տարի գոյութեան կռւում մեր եղբայրները սպառում են իրանց կենսունակ ոյժերը անմար ու վայրենաբարոյ հարևանի արիւնռուշտ ձգտումների դէմ: Թողած իրանց շինարար աշխատանքը, անքուն, անդադար հայրենի օջախի հսկումին նուիրված՝ հարամու յարձակումների դէմ պայքար են մղում: Բայց կայ մի այլ թշնամի, որի դէմ մաքառելը անհնար կը լինի և նա կարող է չասպեցնել ինքնապաշտպանութեան պատուարը: Այդ թշնամին քաղցն է, սոսկալի պահանջը, որով տանջվում են մեր հազարաւոր եղբայրները:

Անասելի կարիքի ու զրկանքի մէջ հեւում են այդ աղէտեալները. մենք ինչ արեցինք նրանց վիճակը թեթևացնելու համար:

Համաճարակ աղէտի դէմ մաքառելու համար մի քանի հազարների նուիրաբերութեամբ ինչ կարելի էր անել:

Հարկաւոր էր կանոնաւորել օգնութեան գործը, կազմակերպել ընդարձակ չափերով, պարտադիր տուրքի բնաւորութիւն տալ:

Գրեցինք, խօսեցինք, բայց և այնպէս այդ էլ զոհ գնաց հասարակութեան անտարբերութեանը:

Դա ցոյց է տալիս թէ որքան գիտակից ենք մենք դէպի մեր պարտքը, որքան պարտաճանաչ ենք:

Ինքնապաշտպանութեան հանդէպ այդ անտարբերութիւնը առանձնապէս աչքի է ընկնում թիֆլիսցիների մէջ: Շուայտ ու ցոփ կեանքի սովոր,քէֆերի սիրահար թիֆլիսեցին, որ աւելի հնարաւորութիւն ունի օգնութեան ձեռք կարկառելու, անզգայ վերաբերվեց դէպի ազգային ընդհանուր աղէտը: Միթէ կարեկցութեան ազնիւ զգացմունքը չէ գծաշարժում նրանց, երբ նրանց աչքի առաջ տառապանքների զոհ դարձած անմեղ եղբայրները վխտում են քաղաքի փողոցներում:

Եթէ նա այդ տեսնելիս գոցում է աչքերը, ուրեմն թող լսէ, թէ ինչ է ասում տաճկի ու քրդի սրից փախստական թիւրքահայ բանուորը: Նա զզզոզ, կոշտացած ձեռքերով ինքնաբերաբար առաջարկելով խմբագրութեանը իր տուրքը՝ ամսական մի րուբլի յօգուտ աղէտեալ եղբայրների, վշտահար ասաց. «Ամմն, մեր դարդեր ծովի, մեր հարէքը շատ: Նա կը խասկընամ»:

Եւ այդ ասում է փողոցներ մաքրող մի խեղճ բանուոր, որի ստացած ռոճիկը ամսական 20 րուբլուց չէ անցնում: Նրա սիրտն է բաբախում ազնիւ զգացմունքներով ու կսկծում ազգային ծով դարդերից:

Եւ քիչ չեն դրա նման նուիրաբերողները, որոնք հէնց իրանք աղէտի զոհեր են և իրանք օգնութեան կարօտութիւն ունեն:

Թող այդ օրինակելի պարտաճանաչութեան առաջ ամօթահար լինեն ազգային աղէտին անտարբեր, բայց մօդայի սիրահար քարասիրտ սֆինքսները և սովորն, որ իրանց սուրբ պարտքն է հոգալ:

Լ. Դանիէլեանց

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ

Բոստոնում անգլիերէն լեզուով հրատարակվող «Armenia» ամսաթերթն սկսել է հրատարակել հանգուցեալ Տիգրան Երկաթի մի նշանաւոր գրուածքը Թիւրքիայի մասին. «Կարող է Թիւրքիան ապրել» (Can Turkey live?), որի բնագիրը ֆրանսերէն է և տպվել է Պարիզի «Revue des Revues» ամսագրում: Յօդուածը անգլիերէնի թարգմանել է պ. Սվազլի, որ Լօնդօնում հրատարակվող «Հայաստան» թերթի (այժմ դադարած) խմբագիրն էր: Այս առթիւ պ. Սվազլի «Armenia»-ի նոյեմբերի (1905) համարում գետեղել է յօդուածագրի կենսագրութիւնը, որի գլխաւոր մասերը առաջ ենք բերում ստորև:

«Անգլիախօս աշխարհը շատ քիչ է ճանաչում Տիգրան Երկաթին: Նա գուցէ ամենագեղեցիկ մտաւորական ոյժն (intellect) է, որ հայ ցեղն արտադրել է իր գոյութեան վերջին դարերում: Նրա անունը յայտնի դարձաւ Կ. Պօլսի 1896-ի կոտորածներից յետոյ: Նա Պօլսից տեղափոխվեց նախ Աթէնք, ուր բազմաթիւ կրթված հասարակութեան առջև մի ճառ խօսեց հին դասական և միջին դարերի հայ-հելլէնական յարաբերութիւնների մասին և ցոյց տուեց այն առաւելութիւնները, որ կարող էին առաջանալ հայ-յունական գործակցութիւնից՝ քաղաքակրթութեան և սոսիալական գաղափարների յաղթանակի համար Արևելքում: Նրա այս ճառը խորունկ և երկարատև տպաւորութիւն թողեց յոյն ունկնդիրների վրա. նրան ողջունեցին իբրև Յունաստանի ամենահաւատարիմ բարեկամներից և պաշտպաններից մէկը, և մտցրին յոյն ժամանակակից ամենայայտնի բանաստեղծների և հեղինակների շարքը:

Զօպանեան՝ նրա մասին ասում, էր թէ նա հելլէնացած հայ է: Նա մասամբ այդպէս էլ էր: Բայց նա չէր նմանում հայազգի Պարոյրին, որ Դ. դարում, Աթէնքում նոր-պլատոնականութիւն (néoplatonisme) էր սովորեցնում: Տիգրան Երկաթ ոչ թէ միայն նրա նման իր հայրենիքը չը մոռացաւ, այլ ընդհակառակը իր պայծառ, առոյգ և ճկուն տաղանդը՝ կարող եմ ասել մինչև անգամ հանճարը, գործ դրեց այնպիսի մի դատի համար, որի կողմն էին իրաւունքի և արդարութեան ամենաառողջ սկզբունքները: Նա գործում է Կրէտէի և Յունաստանի համար իբրև ազատասէր և իբրև ազնիւ և բարձր գաղափարներով տոգորված մարդ: Եթէ նրա առողջութիւնը ներէր, նա գարիբալդիական նման կը կռւէր գերութեան մէջ գտնվող ցեղերի ազատութեան համար: Բայց նա՝ նախ քան ամենայն՝ հայ էր: Իբրև հայ՝ նա ֆրանսական հանդէսներում յօդուածներ հրատարակեց հայ ժողովրդի գրականութեան, պատմութեան և վիճակի մասին: Նա մեռաւ շատ երիտասարդ,—դեռ ևս 27 տարեկան—և իրանից յետոյ թողեց մի ստուար գործ,որը չէր կարողացել վերջացնել. Նա հիւանդ էր և հիւանդութիւնը արգելք էր լինում մտաւոր աշխատութեան. այնուամենայնիւ նա չէր լքանում գրական աշխատանքը: «Եթէ մինչև իսկ աջ ձեռքս չը բանի, ասում էր նա միշտ, ձախ ձեռքով պիտի շարունակեմ գրել»:

Ես նրան տեսայ Պարիզում, 1896-ին, ձմեռը, մահվանից 2 տարի առաջ: Խորհրդաւոր, մարգարէական մի բան ունէր նա իր մէջ: Նա ամբողջապէս հոգի էր, մի մաքուր և անմարմին ոգի՝ անսահման կամքով և նպատակի յամառութեամբ: Նա ինձ կրկնեց Աթէնքի Պառնասում խօսած իր սքանչելի ճառը և բացատրում էր իր ծրագիրը թէ ինչ կերպով կարելի է ազատել հայ ցեղը գերութիւնից: Պարիզում նրա ընկերութիւնը փնտռում էին այնպիսի մարդիկ, ինչպէս Maurice Barrès, Daudet և այլ նշանաւոր հեղինակներ. իսկ պարբերական թերթերը միմեանց հետ մրցում էին նրա հզօր գրչի արտադրութիւնը հրատարակելու համար: Նրա քննական տեսութիւնը Թուրքերի վրա—«Կարող է Թիւրքիան ապրել»—հրատարակվեց նախ ֆրանս.«Revue des Revues» հանդէսում: Ես կարծում եմ թէ այս երկը Տիգրան Երկաթ իր մահվան անկողնում թելադրած է իր մի անբաժան ընկեր-բարեկամին:

Այդ գրուածքը իր ժամանակին մեծ յուզմունք առաջ բերեց և Լօնդօնի ֆրանսիական դեսպանը գրեց Պարիզ իմանալու համար թէ ով էր այն «նշանաւոր քաղաքագէտը», որ այնքան ազնիւ կերպով երևան է հանել մի կարևոր հարցի բոլոր մանրամասնութիւնները: «Տիգրան Երկաթ» կեղծ անունն էր. Նրա բուն անունը Կարապետ Պըլըզիկճեան էր: Նա պիտի յիշվի և մնայ ապագայի համար իր կեղծ անունով: Նրա մահվան առթիւ յունական թերթերը և հանդէսները երկար սիւնակներ նուիրեցին Հայաստանի հռչակաւոր զաւակի յիշատակին: Պալամաս յոյն բանաստեղծը իր ամենալաւ բանաստեղծական գործը նուիրեց «Տիգրան Երկաթի օրհնեալ շուքին». Իսկ Սուրիս, ժամանակակից Արիստոփանէսը, մի քերթուած գրեց, որի անման տողերում նա ողբում էր մահը նրա, որ «հառաչեց և կռւեց երկու ազգի ցաւերի համար»....

Պ. Սվազլիի այս գեղեցիկ յօդուածին իմ կողմից կարող եմ աւելացնել հետևեալը: Պըլըզիկճեան հայ-կաթօլիկ գերդաստանը, որին պատկանում էր Տիգրան Երկաթ, Կ. Պօլսում շատ յայտնի է, որին ես անձամբ ճանաչում եմ: Այս ընտանիքի մի անդամն էլ այժմ Վիեննայի Մխիթարեան ուխտի միաբան է և վանքի մատենադարանապետը՝—հայր Բառնաբաս վարդապետ Պըլըզիկճեան:

Ողբացեալ Տիգրան Երկաթի՝ այս վաղվոռուն և ինքնազոհ հայ հայրենասէրի յիշատակը անջնջելի պիտի մնայ թիւրքահայոց ազատագրական շրջանի տարեգրութեան մէջ:

Սարուխան

ԴԷՊՔԵՐԸ ՍՕՉԻՈՒՄ

(Նամակ Սօչիից)

«Սօչին հանգիստ է. Սօչիում ոչ մի յեղափոխական աչքի զարնող շարժում չի լինի». այս ինչ էինք մտածում և կրկնում մենք ամբողջ անցեալ 1905 տարվայ 10 ամիսների ընթացքում, երբ համայն Ռուսաստանում բռնկել էր յեղափոխութիւնը, երբ ագրարային, բանւորական և այլն շարժումները ցնցում, տակն ու վրա էին անում լայնածաւալ Ռուսաստանի նախկին կեանքը. փոքրիկ Սօչին երկար ժամանակ լաւ հանգիստաւոր դեր էր կատարում և կարծէք հաւատ էր ներշնչում բոլորիս էլ, որ Սօչին այդպէս էլ կը մնայ: Բայց դէպքերը կարճ ժամանակվայ ընթացքում արագօրէն այնպէս զարգացան, որ յանկարծ երկու ամսում կերպարանափոխ արին նրան: Սօչին յեղափոխական քաղաք էր դարձել: Երկար կանգ չեմ առնի զանազան ժողովների, ժողովրդական դատարանի և այլն մասին, դրանք միօրինակ կրկնութիւններ են:

Յեղափոխական կուսակցութիւններից գլխաւոր դերը կատարում էր այստեղ Ռ. Ս. Դ. Կ.-ը: Եւ մի ժամանակ ասպարէզը համարեա միայն նրանն էր: Դեկտեմբեր ամիսը Սօչիում իսկական յեղափոխական օրեր էին, կազմակերպած ժողովուրդը ապաւորեց էր նեռվել, բաց կռւէ յայտարարել կառավարութեան, բացօդեայ միտինգներ, ցոյցեր կարմիր դրօշակներով, քաղաքային միլիցիա և այլն. քաղաքը համարեա նրանց ձեռքումն էր. ոստիկանութիւնը և կառավարութիւնը կարծես գոյութիւն չունէին, ոչ մի վճռական քայլ չէին անում, այնպէս էին ցոյց տալիս որ իրանք չեն հաւատում իրանց գոյութեան:

Քաջալերված դրանից բանւորական կուսակցութիւնը իր վերջին միտինգում դեկտեմբերի 10-ից որոշեց ձեռք առնել քաղաքային վարչութիւնը և կատարել նոր ընտրութիւններ դէմօկրատական ձևով և դրա համար ընտրեց առանձին յանձնախումբ, որը քաղաքը բաժանեց շրջանների և սկսեց արձանագրել ընտրելու իրաւունք ունեցողներին, առանց խտրութեան ազգի, կրօնի և սեռի, 21 տարեկանից վեր. բաց թողեց յայտարարութիւն, որ ցուցակագրութիւնը սկսել է և շուտով կայանալու են ընտրութիւններ «յեղափոխական քաղաքային վարչութեան»:

Գաւառապետը այստեղ խզեց իր լռութիւնը, բաց թողեց մի հակայայտարարութիւն, որով զգուշացնում էր հասարակութեան չը մասնակցել այդ ընտրութիւններին. Նա համարում էր նրանց ապօրինի և քանի որ նոր օրէնքներ դեռ չը կային, ինքը պարտական էր ղեկավարվել միմիայն նախկին օրէնքներով և հետևաբար դիմելու էր ոյժի՝ արգելելու համար նոր ընտրութիւնները:

Յեղափոխականների համար դա անսպասելի էր. Նրանք այնպէս էին հաւատացել, որ կառավարութիւնը ոչ մի արգելք չի դնի, մանաւանդ որ զինւորական ոյժը Սօչիում աննշան էր, 70 սարաժնիկ, 23 հետևակ զօրք և 12 պօլիցիական: Զօրքի հրամանատարը յայտնել էր գաւառապետին, որ ընդհարման դէպքում նա պաշտպանելու է միայն իր սակաւաթիւ զօրքով զօրանոցը, որովհետև ունէր 230 աւելորդ հրացաններ որ պատկանում էին 15 օր առաջ մեկնած պահեստի զինւորներին: Յեղափոխականներին մնում էր կամ յետ կանգնել ընտրութիւններից և կամ զէնքի ուժով իրագործել նրանց:

Մի քանի օր քաղաքում հանգիստ էր, լուռ, դարձեալ կարծում էինք, որ կրիտիքական օրերը անցան և քաղաքում զինված ընդհարում չի լինի, մանաւանդ որ յեղափոխականների զինւորված ոյժը աննշան էր, եթէ չը հաշվէինք քաղաքային միլիցիան, որը վերջին օրերում իրականապէս մտել էր դէմօկրատների իշխանութեան տակ:

Եկան ռուսաց Ծննդեան տօնի օրերը. ամեն ինչ խաղաղ էր: Բոլորն էլ լաւ էին, բայց որպէս յետոյ տեսանք, այդ խոր լռութիւնը խաբուսիկ էր, երկու կողմից էլ լուռ, բայց լուրջ պատրաստվում էին ընդհարման դէպքում յանկարծակիի չը գալու և յաղթանակը տանելու համար:

Դեկտեմբերի 27-ին, Ծննդեան երրորդ օրը, երբ մագազինները գոց էին, յանկարծ քաղաքում լուր տարածվեց, որ Գագրիից, Ադլերից գիւղերից եկան կամաւորներ. շատ չանցած Սօչիի փողոցներում զինված ցոյց էր արդէն. կամաւորները զինված էին վինչէստար 12 կրականոց հրացաններով, (Փոթիում առգրաւված զէնքերի մի մասը.) Նրանց թիւը 100-ից աւել էր, ուրեմն խնդիրը պարզվեց. դէմօկրատները որոշել էին զէնքով իրագործել իրանց որոշումը. այլ ևս ակնյայտ էր զինված ընդհարման անխուսափելի լինելը, միայն առիթն էր պակաս. 27-ին, ոչ մի ընդհարում, հեռագրաթելերը բոլոր կտրված էին. 28-ին միլիցիոնէրները յայտարարեցին խանութպաններին գոցել մագազինները, որովհետև միտինգ էր լինելու. վայրկենապէս քաղաքում կեանքը դադարեց. ամեն ոք շտապում էր տուն. միտինգը «Базарный площадь»-ում սկսվել էր և զինված կամաւորները դարձեալ պտտում էին քաղաքում և, ինչպէս յետոյ իմացանք, միտինգում արդէն յայտարարվել էր զինված ապստամբութիւն: Կամաւորների թիւը հետզհետէ աւելանալով հասաւ 250-ի. կային բաւականաչափ ռուսներ, բայց ճնշող մեծամասնութիւնը իմէրէլներ և վրացիներ էին. ռուսների մեծ մասը անզէն էր. միտինգից յետոյ կամաւորները ցրվեցան՝ և մագազինները քիչ-քիչ բաց արին:

Գաւառապետը այդ պահուն քնած չէր: Սօչիի վերի թաղում հաւաքել էր իր մօտ սարաժնիկներին, բոլորը ձիաւոր, կազմ և պատրաստ իւրաքանչիւր պատահարի:

Կէսօրվայ ժամը 2 կը լինէր Գագրից նորից գալիս էին կառքերով զինված կամաւորներ և կառքերում գետեղած աւելորդ զէնք և փամփուշտ: Գաւառապետը այս անգամ վճռական քայլ արաւ, ուղարկելով կառքերի առաջը ձիաւոր սարաժնիկների մի մասը, զէնքեր խլելու համար: Ծովեզր բազարի կենտրոնում սարաժնիկները շրջապատեցին կառքերը և պահանջեցին զինաթափ լինել: Ստանալով մերժողական պատասխանը, բաց արին կրակ, սպանեցին մէկին, մինին էլ վիրաւորեցին: Յանկարծ ամեն կողմից թափվեցան կամաւորները և կարճ ժամանակում կռիւը տաքանալով կատարեալ պատերազմի կերպարանք առաւ. ժողովուրդը խելակորոյս և լեղապատառ մտնում էր պատահած տեղը, չորս կողմ սրացող գնդակներին զոհ չը գնալու համար. հրացանների միահամուռ և անվերջ տրաքոցը սարսեցնում էր Սօչիի ազգաբնակութիւնը, որը առաջին անգամն էր տեսնում զինված ընդհարում: Սարաժնիկները չը կարողանալով դիմանալ կամաւորների բազմութեան, թողնելով ձիերը՝ պաշտպանողական դիրք բռնեցին հրապարակում նոր շինված մագազիններում. բայց այդտեղից էլ ստիպված էին նահանջել շրջապատվելու վախից. ամենաառաջ կռիւը տևեց մի ժամ. յաղթութիւնը կամաւորների կողմն էր. սարաժնիկները նահանջեցին և աջողեցան խոյս տալ Սօչիի վերի թաղը: Աչքի առաջ ունենալով արձակված հրացանների քանակութիւնը և մօտաւորապէս 2 ժամ տեւող յարձակողական և պաշտպանողական ընդհարումը, ես կարծում էի, որ սպանված և վիրաւորված կը լինի առնուազն 50, բայց, բարեբաղդաբար, զոհերը երկու կողմից էլ շատ քիչ էին—կամաւորներից 1 սպանված, 1 վիրաւոր, սարաժնիկներից 2 սպանված, 8 վիրաւոր և 3 ձի սպանված. կողմնակի մարդկանցից 2 սպանված, 2 վիրաւոր:

Արդէն մութն էր. քաղաքում տիրեց խաւարութիւն. ազգաբնակութեան մի մասը խոյս տուեց, թողնելով ամեն ինչ անպաշտպան. ոչ ոք չէր կարող որոշել թէ միւս օրը ինչ էր լինելու: Ցրված սարաժնիկների մեծ մասը, (մի մասը բոլորովին խոյս տուեց) գաւառապետը, սարաժնիկների հրամանատարը, պրիստաւը, պօլիցիականները գիշերով վերցնելով գանձարանից 25,000 րուբլի ոսկի փող և 120,000 րուբլու թղթադրամ և արժէթղթեր, ամրացան զօրանոցում և սկսան խրամատներ փորել պաշտպանվելու համար:

29-ին, կէսօրից յետոյ սկսվեց պաշարումը. կամաւորները զօրանոցի չորս կողմում դիրքեր բռնելով՝ պաշարումը դարձրին կատարեալ. ապարդիւն հրացանաձգութիւնը տևեց ուշ գիշեր, զօրքերը և սարաժնիկները խրամատներից և դիրքերից պատասխանում էին կատաղօրէն: Այդ օրը ոչ մի սպանված և վիրաւորված. կամաւորների թիւը քանի գնում աւելանում էր. շրջակայ գիւղերից զինվածներ հետզհետէ շտապում էին տներից և ամառանոցներից. յեղափոխականները վերցնելով հրացանները բաժանում էին բանւորներին և նոր կամաւորներին. քաղաքը զինւորական բանակ էր դարձել, մանաւանդ որ կռւին և պաշարման չը մասնակցողներից շատերն էլ զէնքով էին պտտում լոկ ինքնապաշտպանութեան համար: 30-ին պաշարման շարունակութիւն—անընդհատ հրացանաձգութիւն, ոչ սպանված, ոչ վիրաւոր:

31-ին պաշարողները սկսան ռմբակոծել զօրանոցը մի հին թնդանօթով, որը շուտով մաքրել և տարել էին դիրք ճիշտ զօրանոցի դէմ ու դէմ. արձակում էին հին փոքրիկ ռումբեր և չուգունէ գրաւներ. վնասը աննշան. կամուրջի վրա վիրաւորվեց մի անցորդ, կամաւորների թիւը հասնում էր 7—800-ի:

1906 թ. յունվարի 1-ին, շարունակութիւն հրացանաձգութեան և ռմբակոծութեան. զօրանոցի պատերը և տանիքը բաւական վնասված էին, պաշարվածների դրութիւնը ծանր էր. անընդհատ հրացանաձգութեան պատճառով նրանք ստիպված էին մնալ խրամատներում ամբողջ օրը և փոխվում էին միայն գիշերները: Մոռացայ ասել, որ յեղափոխականները գերի վերցրել էին մի քանի անձնաւորութիւնների և գաւառապետի կնոջը, հիւանդ, որ քաղաքային բժշկին յանձնեց մի նամակ, որտեղ խնդրում էր ամուսնուց չը շարունակել անօգուտ դիմադրութիւնը և անձնատուր լինել: Բժիշկը յայտնեց այդ մասին դէմօկրատների ղեկավարներին և վերջ ի վերջոյ համոզեց սկսել բանակցութիւն գուցէ գործը վերջացնելու առանց աւելորդ արիւնահեղութեան: Բանակցութիւնները սկսեցին կէսօրվայ ժամը 2-ին և տևեցին երեկոյեան ժամը 6-ը. պաշարեալները անձնատուր էին լինում հետևեալ պայմաններով: Զօրքը իրանց 2 օֆիցերներով մնում էին ազատ հրացաններով և հարկ եղած փամփուշտներով զօրանոցում: Գաւառապետը մնում էր ազատ. իսկ սարաժնիկները իրանց հրամանատարով, պօլիցիականներով գերի էին վերցվում. Նրանց զէնքերը, զօրանոցում եղած 230 հրացանները և փամփուշտները մնում էին յեղափոխականներին: Լուրը կայծակի նման տարածվեց քաղաքում. հաշտութիւն. բնակիչները դուրս էին գալիս իրանց տներից և ուրախ միմեանց շնորհաւորում, որ վերջապէս ազատվեցան այդ ծանր դրութիւնից. պաշարման ընթացքում վիրաւորվել էր միայն մի զինւոր:

Յեղափոխականները վերցրին գերիները, հրացանները, փամփուշտները և գանձարանի փողը. Նրանք ուրախ էին, հրճվում էին: Բայց սա երկար չը տևեց. 2 ժամից յետոյ հորիզոնում երևաց մի պատերազմական նաւ և սկսեց պրօժէկտօրով դիտել քաղաքը: Բաթումից մի ականանաւ էր եկել օգնութեան պաշարվածներին և Ռուսաց ընկերութեան մի նաւ ափ իջեցրեց զօրք և կօզակ: Յեղափոխականների դրութիւնը ծանր էր: Ի՞նչ անել. ժողովուրդը վախենալով ռմբակոծութիւնից, գիշերը սկսեց խոյս տալ սարսափահար: Լուրեր էին գալիս, որ ամեն տեղ յեղափոխութիւնը ճնշվել է և կառավարութիւնը դիմում է խիստ միջոցների, ուրեմն և աւելորդ էր Սօչիում կռիւը շարունակել: Յունվարի 2 ին ծովեզերքից գնացին պատուիրակներ ականանաւը, բանակցելու: Հրամանատարը յայտնեց, որ ինքը վերցնելու է միայն զօրքը և հեռանալու է և մի և նոյն ժամանակ ցանկութիւն յայտնեց պտտել քաղաքը: Տրվեց իրան կամաւորներից պահակ և զօրանոցը դիտելուց յետոյ վերադարձաւ և պահանջեց զօրքերը: Վարպետ քաղաքականութեամբ նա իր պահանջները հետզհետէ կատարել տուեց. վերցրեց զօրքը, գերի սարաժնիկներին, զէնքերի մի մասը և վերջ ի վերջոյ յունվարի 5-ին պահանջեց փողը, սպառնալով հակառակ պարագային, ժամը 4-ին, ռմբակոծել քաղաքը: Քաղաքում պաշտօնական տների և հաստատութիւնների վրա ճերմակ դրօշակ էին բարձրացրել. ժողովրդի մի մասն էլ խոյս տուեց նաւը. որոշեալ ժամին փողը յանձնեցին. պակասում էր կարծեմ 145 րուբլի:

Բանակցութիւնների ընթացքում յեղափոխականները երևի աւելորդ էին համարել հին դիմադրութիւնը և սկսան հետզհետէ հեռանալ: Յունվարի 4-ին քաղաքում ոչ մի զինված մարդ չէր երևում: Այդ օրը ցամաք ելան նաւից 50 կօզակ և մի վաշտ զօրք: Սօչիում և նրա շրջանում յայտարարվեց զինւորական դրութիւն. սկսեցին խմբովին ձերբակալութիւնները. հին սարսափը տիրեց բոլորին. ձերբակալվածներից երկուսին հրացանազարկ արեցին: Մինչև այսօր շարունակվում են ձերբակալութիւնները, թէև մագազինների մեծ մասը բաց է, բայց առևտուր չը կայ, կեանքը մեռած է. հետզհետէ կօզակների թիւը աւելացնելով հասաւ 500-ի: Եղան և խուզարկութիւններ, սկզբում գործութիւնները պակաս չէին. գիւղացիները արդէն զէնքերին յանձնելով՝ յայտնում են հաւատարիմ հպատակութիւն. ասում են ձերբակալվածների թիւը հասնում է 200-ի: Շարունակվում է քննութիւնը. դրութիւնը ծանր է և անորոշ, խոյս տուողների մեծ մասը չէ վստահանում վերադառնալ քաղաք:

Մի քանի խօսք էլ. յեղափոխականները այրեցին գաւառապետի դիւանատուն, և հաշտարար դատաւորի բոլոր թղթերը. կողոպտված են գաւառապետի տունը, սարաժնիկների կազարման, փորձնական կայարանի կառավարչի տունը, իսկ կառավարիչ Լիխօվեցքին սպանվեց ընդհարման երկրորդ օրը. այրված է մի տաւն. նոյնպէս սպանված է չարագործների ձեռքով կամս Բօրրինկու ամարանոցի կառավարիչ Գուտրեվիչը:

Ինչպէս երևում է, մի կարգ չարագործներ գուցէ և կամաւորների շարքերից, օգտվելով առիթից, լրբօրէն կողոպտում էին որոշ տներ, մաքրում անձնական հաշիւներ. այստեղ մասամբ էլ յանցաւոր են ղեկավարները, որ այդ օրերում ոչ մի միջոց ձեռք չէին առել գողութիւնների առաջն առնելու. քաղաքը և մանաւանդ շրջակայ դաչաները թողել էին բոլորովին անպաշտպան և բաղդի կամքին:

Վ. Մ.

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

Փետրվարի 10-ին.

Փետրվարի 8-ին հայ թատերասէրները քաղաքային ժողովարանի դահլիճում յօգուտ հայոց դպրոցի ներկայացրին Սունդուկեանի «Էլի մէկ զոհ» կոմեդիան, որ այնքան սիրելի է տեղիս սիրողներին: Խաղը բաւարար անցաւ: Օր. Ա. Գօճեան հիանալի կատարեց Անանուշ և Նատօյի դերը: Լաւ էր և օր. Ա. Սարգսեան, որը չը նայելով, որ առաջին անգամ էր դուրս գալիս բեմի վրա, լաւ էր պատրաստել Սալօմէի դերը և բաւարար խաղաց: Միքայէլի և Վանօյի դերերը կատարողները պարզ երևում էր, որ չէին սովորել իրանց դերերը: Մուտք եղաւ 105 ր. 5 կոպ., ծախս—35 ր. 66 կոպ., զուտ արդիւնք մնաց 69 ր. 39 կոպէկ:

Յունվարի 27-ին կայացրած քաղաքային իրաւասուների ժողովում քաղաքագլուխ Ենիկոլոփեան ծանօթացրեց ձայնաւորներին քաղաքի ֆինանսական դրութեան հետ: Նոյն քաղաքագլուխը ստացել է նախկին քաղաքագլխի պաշտօնակատարից առձեռն դրամ 17 ր. 25 կոպ. առ 1 յունվարի և պարտք մօտ 3500 ր.: Քաղաքին չը վճարված տների գնահատման տուրքեր մնում են ապառիկ մօտ 14,000 ր.: Այս դրութիւնը պարզ է, որ խիստ ծանր դրութեան մէջ է գտնում քաղաքին, ուստի ցանկալի է, որ մեր քաղաքացիները իրանց քաղաքի շահերը աչքի առաջ ունենալով՝ շտապեն վճարել քաղաքին իրանց ապառիկները. այսպէս դատապարտել քաղաքային վարչութիւնը՝ նրանք ոչ մի բարոյական իրաւունք չեն ունենայ, որովհետև դատարկ դրամագլխով ոչ մի բանի ձեռնարկել չի լինի, այն ինչ անյետաձգելի կարիքներ շատ ունենք. հարկաւոր է մեզ հիւանդանոց, քանդված ճանապարհի շինելը, քաղաքային դեղատուն և ուրիշ անյետաձգելի պահանջներ: Ի դէպ. քաղաքային իրաւասուների ժողովը անցեալները վճռեց բանալ Սղնախում քաղաքային դեղատուն, որի համար միջնորդութիւն յարուցեց նահանգապետի առաջ:

Քաղաքը տալիս է Մարիինսկի դպրոցին տարեկան 600 ր. նպաստ: Որովհետև անցեալ տարի քաղաքի եկամուտները շատ սուղ են եղել, ուստի այդ գումարը վճարված չէր: Որովհետև այս բանից կարող էր դպրոցը փակվել, ուստի քաղաքային ձայնաւորների ժողովը որոշեց վճարել դպրոցին թէ անցեալ տարվայ պարտքը 600 ր. և թէ ներկայ տարվայ համար էլ յատկացնել 600 ր.: Նոյն ժողովում որոշվեց ճանապարհների բարեկարգութեան համար 1000 ր.: Առաջ առնում էին քաղաքային տուրք 8%, այժմ որոշվեց առնել 6%:

Անցեալ նոյեմբերի 28-ին զայրացած ամբոխը քարկոծեց հինգ մանր գողերին: Քարկոծվածներից երեքը հայեր էին, երկուսը վրացի: Ամբոխը մեղադրում էր ոստիկանութեան, որի թուլութիւնից՝ քարկոծված գողերից նրանք հանգստութիւն չունէին: Քարկոծվածների ծնողներն այսպիսի ինքնագլուխ դատաստանի համար բողոքել էին ուր հարկն է: Այժմ սկսված է դատաստանական քննութիւն այդ դէպքի մասին: Գաւառապետ Իգնաթիեւ հրաժարեցրված է պաշտօնից: Քաղաքում պտտող լուրերի համաձայն, գաւառապետի հեռանալը կապ ունի քարկոծման գործի հետ. աւելացնում են և այն, որ գաւառի գիւղացիները չէին վճարում պետական հարկեր: Քաղաքացիները խնդիր են ուղարկում նահանգապետին, խնդրելով թողնել նրան իրան նախկին պաշտօնում, որովհետև նրանից շատ գոհ են եղել և լաւ մարդ է եղել:

Հայոց եկեղեցական-ծխական դպրոցն այս տարի տեղաւորված է մասնաւոր շինութեան մէջ: Յայտնի է, որ օրէնքով մեզ թոյլատրված է բանալ եկեղեցական-ծխական դպրոցներ միայն վանքերին և եկեղեցիներին կից: Կառուցանել դպրոցի համար սեփական շինութիւն մեր հոգաբարձութեան առաջին հոգսն է: Այս նպատակով հոգաբարձութիւնը մօտ օրերս գումարելու է ծխականների ժողով այս հարցը վճռելու համար: Յոյս ունենք, որ մեր քաղցիները կը քաջալերեն հոգաբարձութեան և մասամբ նուէրներով, մասամբ էլ փոխ տալով՝ կը կառուցեն դպրոցական շինութիւն, որ անհրաժեշտ է անպատճառ: Դպրոցի շինութեան համար, գործադրելով նաև նախկին դպրոցի աւերակների նիւթը, կը հարկաւորվի մօտ 3000 ր.: Մայր եկեղեցին ունի պատրաստի դրամ 1200 ր., որ ի հարկէ հոգևոր իշխանութիւնը առանց վարանելու կը յատկացնէ դպրոցի կառուցման ֆոնդին: Մ. Ամիրխանեանի ժառանգները նուիրեցին 200 ր.: Պակասում է մօտ 1500 ր.: Կարծում ենք, որ այդ գումարը Սղնախի հայերը, որոնք հաշւում են. մօտ 800 տուն, կարող են հեշտութեամբ տալ դպրոցին, եթէ ի հարկէ ցանկանում են չքաւորութիւնը պատճառաբանել անհիմն կը լինի: Եթէ չեն ուզում նուիրել, գոնէ փոխարինաբար տան դպրոցին առանց տոկոսի, առնուազն 5 տարով: Եւ Սղնախի հայերը բարոյական իրաւունք չեն ունենայ հայ անունը կրելու, եթէ նրանց մէջ չը դուրս գան գոնէ 15—20 մարդ, որոնք առանց տոկոսի հինգ տարով փոխ տան՝ իւրաքանչիւրը գոնէ 100 րուբլի... Ցանկալի է, որ մեր հեռաւոր հայրենակիցները նոյնպէս նիւթապէս աջակցեն այս գործին:

Յայտնի է, որ Էջմիածնի Սինոդը 1904 թ. կարգադրեց բժշկական վկայական պահանջել պսակվող երիտասարդներից: Լրագրում շատ տրտունջներ յայտնվեցին դրա դէմ, նոյն իսկ հոգևորականների կողմից: Այդ կարգադրութիւնը Սղնախում դարձել է արդէն օրէնք: Շնորհակալութեան արժանի է մեր գործակալ Սրապիոն աւագ քահանայ Տէր-Յովհաննիսեան, որը մարմնացրել է այդ գեղեցիկ օրէնքը Սղնախում. շնորհակալութիւն և մեր քահանաներին, որոնք առանց տրտնջալու և դիմադրելու կատարում են այդ համակրելի կարգադրութիւնը:

Շուտով լինելու է քաղաքային աւագի օգնականի ընտրութիւնը: Խօսակցութիւն կայ ձայնաւոր Ս. Տէր-Գրիգորեանի մասին: Ս. յայտնի է, որպէս առաջին և գործունեայ երիտասարդ և շատ ցանկալի կը լինի, ի հարկէ, նրան ընտրել:

N. N.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Դեկտեմբերի 15-ից մինչև յունվարի 25-ը կայսրութեան զանազան քաղաքներում փակեցին 78 պարբերական հրատարակութիւններ և [illegible] 58 [illegible] 62 քաղաքներում և տեղերում մտցրված է զինւորական դրութիւն, 34-ում մտցրված է ուժեղացրած պաշտպանութիւն: Այդ ժամանակամիջոցում միմիայն Պետերբուրգում կալանաւորված են 1715 մարդ. 17 քաղաքներում բանտերն այնպէս լցված են, որ տեղ չը լինելու պատճառով կալանաւորվածները մնում են ոստիկանական մասերում: (Русь):

—

Մեզ հաղորդում են, որ տանտէրերի կողմից համաձայն պարտադիր կանոնների, ամեն երեկոյ դռների առաջ վառվող լապտերները վերջին անգամ յայտնի չէ ովքեր կոտրում են և մի քանիսն էլ հանգցնում են: Այս կողմից տանտէրերը դժուար կացութեան մէջ են, որովհետև օրապահ ոստիկանների հսկողութեան վրա յուսալ անկարելի է. Նրանք անկարող են իրանց համարում, երևի հսկելու այդպիսի դէպքերում, մանաւանդ որ լապտերների փշրտելը և հանգցնելը շատ ճարպիկութեամբ է կատարվում, իսկ ամեն անգամ ևս նոր և անվերջ ծախսեր անելը վերին աստիճանի ծանր է, մանաւանդ խեղճ դասակարգի համար: Արդեօք ով պէտք է այս երևոյթի վրա հարկաւոր ուշադրութիւն դարձնէ և ժողովրդի անել դրութեան համար մի ելակէտ գտնէ:

—

Փետրվարի 17-ին Թիֆլիսի Դատաստանական Պալատում դռնփակ քննվում էր Շուշի քաղաքի բնակիչ Սմբատ Մարգարեանի գործը: Սմբատ Մարգարեանը մեղադրվում էր այն բանում, որ 1902 թ. սեպտեմբերի 5-ի գիշերը ինքը և իր մի քանի ընկերները փախցրել էին Շուշի քաղաքում ժամանակաւորապէս բնակող միլիօնատէր Իսահակ Ժամհարեանին և մահվան սպառնալիքով ստորագրութիւն էին վերցրել նրանից 30,000 ր. տալու յօգուտ տաճկահայկական դատը պաշտպանող գործիչների: Գանձակի նահանգական դատարանը արդարացրել էր պ. Մարգարեանին, իսկ նոյն դատարանի պրօկուրօրը բողոք էր ուղարկել այդ վճռի դէմ պալատը: Պալատը հաստատեց դատարանի վճիռը, նոյնպէս արդար ճանաչելով մեղադրեալին, որին պաշտպանում էր երդուեալ հաւատարմատար Տիգրան Յովհաննիսեան:

—

Էլեկտրաքարշ երկաթուղու Թիֆլիսի դիրեկտորը՝ ընդհանուր գործադուլի ժամանակ 13 օր ծառայութեան չեկող վատմաններից միայն մի քանիսին վճարելով ռոճիկները այդ 13 օրվայ համար, մնացածների մէջ դժգոհութիւն է յառաջացրել: Այսօր, փետրվարի 17-ին, ռոճիկ չը ստացողները պիտի հաւաքվին ընկերական դատի ենթարկելու դիրեկտորի այդ կերպ վարմունքը և իրան ևս պիտի հրաւիրեն բացատրութեան համար:

—

Թիֆլիսի Նորաշէնի ս. Աստուածածնի եկեղեցու ծխական հոգաբարձութիւնը՝ համաձայն նոյն հոգաբարձութեան ընդհանուր ժողովի որոշման—հրաւիրել է Եղիշէ վարդապետ Մուրադեանին ներկայ մեծ-պասի կիրակի երեկոները յիշեալ եկեղեցում քարոզ խօսելու:

—

Հինգշաբթի, փետրվարի 16-ին, ցերեկվայ ժամի 1-ին, քաղաքիս 9-դ մասում, Թիֆլիսի մի գրպանահատ, Աւճալեան ձիաքարշ երկաթուղու կայարանի մօտ, մի յոյն քահանայի դրպանից հանելով դրամներով քսակը—պատըռատվում էր անհետանալ. այդ ժամանակ, մի կուսակցութեան պատգամող անհինք, որոնք պատահաբար ականատես էին այդ արարքին՝ մօտեցան յանցաւորին, արագութեամբ նստեցրին նրան կառքը և տարան՝ երևի իրանց սահմանած դատաստանով դատելու, որպէս մի քանի ամիս առաջ գործադրվում էր այդ քաղաքումս։ Այս առաջին անգամը չէ, որ այդ ցեցերին ձերբակալում են միայն կողմնակի մարդիկ, իսկ իրանց քթի տակ կանգնած ոստիկանները՝ լոկ հանդիսականի դեր են կատարում այդպիսի դէպքերում։ Մենք յիշում ենք, որ Ռուսաստանի Վ. քաղաքում մի օր՝ բոլոր գողերը և գրպանահատները հրապարակով գործադուլ հրատարակեցին, որի պատճառները բացատրում էին նրանով, որ տեղական ոստիկանութիւնը՝ ստանալով գողացած իրերի արժէքի 50%-ը, քիչ է համարել և պահանջել է վճարել 75%, եթէ անպատիժ կը կամենային շարունակել իրենց արհեստը։ Գողերի ընկերութիւնը յայտնել էր ոստիկանութեանը, որ այդ պայմաններով իրանց այլ ևս ձեռք չի տալ իրանց արհեստով պարապելու, ուստի հրատարակում են գործադուլ։ Փառք Աստուծոյ Թիֆլիսում հօ այդպիսի բան չէ կարող լինել, ուրեմն ինչ է պատճառը, որ մեր գրպանահատները ոստիկանութեան առաջ դատարկելով բնակիչների գըրպանները՝ կարողանում են ջրից միշտ չոր դուրս գալ և շարունակել իրանց արհեստը և կամ եթէ ձերբակալվում են—այն էլ շնորհիւ կողմնակի մարդկանց։ Հազիւ թէ նոյն ինքն իմաստուն Եզոպոսը կարող լինէր այս առեղծուածը լուծել…

—

Քութայիսի բանտի մէջ բանտարկված են երկաթուղու ծառայողներից 66 հոգի. Նրանցից մեծ մասը տեղեակ էլ չէ, թէ ինչ պատճառով է ձերբակալված և բանտարկված,

—

«Մշակի» մէջ Կարսից ուղարկված մի թըղթակցութեան մէջ պատմված էր մի անախորժ դէպք, որ տեղի էր ունեցել Երզրումի ռուսաց հիւպատոսի կավասի հետ։ Այժմ մեզ հաղորդում են, որ դէպքի մանրամասնութիւնների նկարագրութեան մէջ սպրդել են մի քանի անճշտութիւններ և յամենայն դէպս կավասի արարքները ոչ մի կապ չունեն հիւպատոսի հետ, որ իրան բարձր էր պահում խնդրիգներից և կողմնակի հաշիւներից և ուրեմն հիւպատոսի անունը ոչ մի կերպ չը պէտք է խառնվի կավասի հետ պատահած գործի մէջ։

—

Փետրվարի 15-ին, կայացաւ Հաւլաբարի հայ և վրացի սիրողների ընկերութեան առաջին ժողովը, որ վճռեց կիրակի օրերը ներկայացումներ տալ տեղերի էժանացրած գներով։ Առաջին անգամ ներկայացումը կը կայանայ մարտի 12-ին։

—

«Վակէ» տեղամասը քաղաքի հետ միացնելու առիթով մասնաժողովի տուած զեկուցումը, որ ներկայացված էր քաղաքային վարչութեանը փետրվարի 15-ին, վերջինս որոշեց արտատպել վարչութեան զեկուցումների մէջ, և յանձնարարել քաղաքային իւրիսկօնսուլտին մշակելու ստորագրութեան մի ծրագիր, որը մասնաժողովի որոշման 2 յօդուածի համաձայն պէտք է ստանալ «Վակէ» մասի հողատէրերից, Այդ ստորագրութեան հիմնական միտքը այն պէտք է լինի, որ նրանք պարտաւորվում են իրանց վրա առնել կանալիզացիայի ծախքը լիովին, և փողոցների ու հրապարակի սալայատակելու ծախքի կէս մասը։ Եւ առևտրատնտեսական վերակացու Պուրցելաձէի վրա պարտաւորութիւն դնել հնաւորութեան չափ ամենակարճ ժամանակամիջոցում անձամբ տեսնել փոքր ի շատէ խոշոր և ունևոր հողատէրերին և խմբական ստորագրութիւն վերցնել նրանցից իւրիսկօնսուլտի մշակած ձևով, իսկ յետոյ ներկայացնել դումային վաւերացնելու համար։

—

Փետրվար ամսի մօտ 20-ին կը հաղորդվեն այն վնասների գումարները, որ պատճառել է ագրարային շարժումը։ Վնասների գումարը ահագին է։ Դրա մասին գաղափար կազմելու համար բաւական է աչքի առաջ ունենալ միայն երեք նահանգների կրած վնասները։ Կուրսկի նահանգում գիւղացիները կողոպտել և այրել են 2 միլիօն գումարի, անասուններ են կոտորել 800 հազար րուբլու։ Օրլօվի նահանգում այրված է $1^1/_2$ միլիօնի և կոտորել են անասուններ 200 հազար րուբլու։ Սարատովի նահանգում քարուքանդ են արված 18 կալուածատէրերի կալուածքները մօտ 1 միլիօն արժողութեամբ, իսկ անասուններ են կոտորած 450 հազար րուբլու։ Ասում են, որ ագրարային շարժումի պատճառած ընդհանուր վնասը 60 միլիօն րուբլու է հասնում։ (Русь)։

—

«Русь» լրագրին հաղորդում են այն պայմանների մասին, որոնցով ֆրանսիական բանկիրները համաձայնվում են 1200 միլիօն ֆրանկի կամ 450 միլիօն րուբլու նոր փոխառութիւն սարքել Ռուսաստանի համար։ Ի միջի այլոց, ֆրանսիական ֆինանսիստները գըլխաւոր պայման են դնում Պետական Դումայի հրաւիրելը ոչ ուշ ապրիլից։

—

Հաւլաբարի էլեկտրաքարշ երկաթուղու աշխատանքները, որոնք վերջին գործադուլների և խառնակ վիճակի պատճառով դադարեցրած էին՝ ներկայ փետրվարի սկզբներին նորից սկսվել են, այնպէս որ մեր հաւաքած տեղեկութիւնների համեմատ՝ էլեկտրաքարշը պատրաստ կը լինի ներկայ տարվայ մայիսի սկզըբներին։ Հաւլաբարի և (Նաւթլուղի) գիծը բացվելով քաղաքիս բոլոր 10-դ թաղաբաժինները կապվում են էլեկտրաքարշով եթէ այդ գծերի հետ միանայ և Վօզնեսենսկի (Սօլօլակ) փողոցի բացվելիք գիծը, որը միևնոյն ժամանակ պէտք է միացնէ ֆոնիկուլեօրի ստորին կայարանը։

—

Երկրագործութեան և հողաբաժնութեան գըլխաւոր վարչութիւնը փետրվարի 14-ին ժողով է նշանակել պետական կալուածքների կառավարիչներից՝ քննելու և լուծելու պետութեան պատկանեալ հողերը գնելու և վարձելու խնդրի վերաբերութեամբ։

—

Խմբագիրների դէմ հալածանքները շարունակվում են և մայրաքաղաքի լրագիրները ամեն օր հաղորդում են նոր նոր այդպիսի դէպքերի մասին։ Այսպէս,՝ օրինակ, այս՝ օրերս զրկական դատարանի պատասխանատուութեան են ենթարկված «Поляр. звѣзда» թերթի խմբագիր պ. Բ. Ստրուվէին պատժ. օրէնքի 129 յօդ. 5-դ կէտի հիման վրա, այնուհետև «Гвоздь» երգիծաբանական թերթի խմբագիրը Բ. Մ. Մուրավինը և «Паяцы» թերթի խմբագիր Վ. Մ. Վիշօմենսկին։ Նմանապէս նոյն վիճակին է ենթարկվել «Петерб. Газета» լրագրի խմբագիր Ն. Ս. Խուդեկովիչը։

—

Սարատովից հաղորդում են, որ միապետականները ցրում են քաղաքում թռուցիկներ, որոնց մէջ սահմանադրական-ռամկավարականներին անուանում են «ժողովրդի վաղնդաւոր թշնամիներ», նոյնպէս յարձակվում են «հոկտ. 17-ի Դաշնակցութեան» վրա։ Այստեղ, լրագիրների ասելով, արգելված է «Голосъ Деревни» լրագրի 2-դ համարը։

—

Թիֆլիսից հաղորդում են «Рус. Вѣд. լրագրին, որ զինուորական ուսումնարանների գըլխաւոր վարչութեան մէջ Թիֆլիսից տեղեկութիւն է ստացվել, որ իբր 50 կադետներ արձակվում են կադետների ուսումնարանից։ Այդ արձակումը կապ ունի Կովկասի վերջին-յեղափոխական դէպքերի հետ։

—

Միմիայն ակցիօներական ձեռնարկութիւնների կրած վնասը վերջին անկարգութիւնների ժամանակ հասնում է 20 միլիօն րուբլու։

—

Հին Նախիջևանից հաղորդում են. «Աչքի առաջ ունենալով, որ նպաստամատոյց յանձնաժողովների պարբերական հաշւետուութիւնները շատ նպաստում են նուիրատուութեան զարգանալուն, ցանկալի է, որ մեր Նախիջևանի յանձնաժողովն էլ հետևի այդ գեղեցիկ օրինակին, որովհետև կարիքը մեզ մօտ մեծ է և մենք կարօտութիւն ունենք դարձեալ նպաստների՝ դրսից։ Մեր Նախիջևանի նպաստամատոյց յանձնաժողովը սկսած մայիսի անցեալ տարվայ աղէտներից մինչև այսօր զանազան հիմնարկութիւնների և պ. պ. նուիրատուների նախաձեռնութեամբ և միջոցով ստացել է և ստանում է փողեր, ալիւր, չայ, շաքար տան և հագնելու իրեղէններ, հողագործութեան և արհեստաւորների համար գործիքներ, քանի՛ ամէն վառելափայտեր և այլն։ Բայց մինչև այժմ չէ կազմված տեղեկագիր յանձնաժողովի արած գործունէութեան մասին։ Այժմ ամենայարմար ժամանակն է այսպիսի մի տեղեկագիր հրատարակելու և դրանով ոչ միայն ծանօթացնելու հասարակութիւնը նրա տուած նուէրների գործադրութեան մասին, այլ և պարզել նոր կարիքների չափը։ Հրապարակական հաշւետուութիւնը մեծապէս կօգնէ նպաստամատոյց գործի զարգացման»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Նիշաբուր, յունվարի 28-ին

Կովկասում անընդհատ շարունակվող հայ-թիւրքական կոտորածը արձագանք է տալիս հարևան Պարսկաստանում և ներշնչում է նրա մոլեռանդ ժողովրդին դարձեալ կոխ, կոտորած, թալան, հրդեհ առաջացնել կամ հայ կոչված մարդու վաճառականութիւնը վերացնել Պարսկաստանից։ Այսպիսի միտք քարոզողներին Կովկասից գաղթող բազմաթիւ ռուսահպատակ թուրքեր, որոնց Պարսկաստան մտնելու նպատակն է խռովութիւն սերմանել, և Պարսկաստանի վիճակն էլ նմանեցնել Կովկասի դրութեանը։

Ահա մի դէպք, որին ականատես եղանք Պարսկաստան-Խորասան նահանգի Նիշաբուր քաղաքում։ Չը նայելով, որ տեղիս պարսիկ ազգաբնակութիւնը անհուն յարգանքով էր վերաբերվում հային, նոյնիսկ մինչև օգոստոսեան արիւնալից ամիսները, և աշխատում է նոյն իսկ այժմ էլ հաշտ ապրել հայի հետ, բայց մի ղարաբաղցի թուրք և մի այլ պարսկահպատակ թուրք շարունակ ժողովներ կազմելով, տեղական թուրք ժողովրդին էլ հանում են խաղաղ ընթացքից, յորդորելով դըրանց թէ դուք «բէղէյրաթ էք» և, եթէ հաւկանաք, պէտք է ընդհատէք ձեր առևտրական յարաբերութիւնները հայերի հետ, և աշխատեք հեռացնել ձեր միջից նրանց, քանի որ Շուշում, Բաքւում, և այլ տեղերում հայերը կոտորում են մեր եղբայրներին։

20 օր սրանից առաջ, այդ ղարաբաղցի թուրք մաշադի Աբուլթալուբ Ասկերովը, մի արձանագրութիւն կազմելով մի քանի իր նըման անձանց հետ նաւթի առևտրի վերաբերմամբ (ինքն էլ նաւթի առևտրով է զբաղվում) տանում է այդ արձանագրութիւնը քաղաքիս ամենայայտնի և բարի Հաջի մօլլա Մամադ մուշտեյիդի մօտ և խնդրում որ նա էլ իր կողմից վաւերացնէ և հարամ-հրատարակէ հայից նաւթ առնելը։ Բարի մուշտէիդը չէ վաւերացնում թուղթը, ասելով. «Այդպիսի բան անկարելի է. ով ձեռնտու է բարւոք չը համարէ, կառնէ, իսկ ով չի ցանկանայ, թող չառնէ։» Այդ լուրը շուտով պտտում է ամբողջ քաղաքում։

Սակայն հայերը չը կարողացան անտարբեր վերաբերվել և դիմելով տեղի դատաւոր Շահզադէ Փարէ Սուլթանին (Նայիբ Դովլի որդուն) խնդրեցին միջոցներ ձեռք առնել հայերի պաշտպանութեան համար։ Դատաւորը պատասխանեց հայերին, որ այդ ժողովներից ինքն էլ տեղեկութիւն ունի և բացատրեց հայերին, որ իրանից գաղտնի քանիցս ժողովներ են եղել ահագին բազմութեամբ տեղիս յայտնի անձանց և կրօնաւորների տներում, ծրագրելով բնաջինջ անել և կոտորել տեղիս հայերին իրանց մնացած ամսին։ Դատաւորը բերանացի վստահութիւն տուեց հայերին, ասելով, որ ոչինչ չի պատահել, որ նա խռովութիւնների առաջը կառնէ և կը պատժէ յանցաւորներին։ Խորհուրդ տուեց հայերին պարսիկների հետ մեղմ և համեստ վարվել, ասելով չը լինի մի փոքր ընդդիմութիւնը առիթ տայ փոթորիկ առաջացնելուն։

Ամսիս 25-ին հայերը, տեղիս վաճառականապետ պ. Բ. Շիրազեանի միջոցով դիմեցին Թեհրան ռուսաց դեսպանատան առաջին քարտուղար Սօմօվին և մի խնդրագրով էլ Մեշէդի ընդհանուր հիւպատոսին, խնդրելով դիմել կտրուկ և խիստ միջոցների խռովարարների չարամիտ դիտաւորութիւնների առաջն առնելու՝ հեռացնելով քաղաքից նենգամիտ խմբի պարագլուխներին։ Սպասում ենք կառավարութեան պատասխանին։

Ահա Պարսկաստանի հայերի վիճակը։

Չը մոռանամ յիշել, որ սուտ է այն լուրը թէ Պարսկաստանում ժանտախտի դէպքեր են եղել։ Ժանտախտը Աւղանիստանի սահմանից դուրս է. Պարսկաստանում ժանտախտով մեռնող չէ եղել։

Ոսկան Յարութիւնեանց

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

16 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 փետրվարի։ Պետական խորհուրդը փետրվարի 15-ին քննեց—մինիստրների խորհրդի մամուլի վերաբերեալ լրացուցիչ կանոնների մշակած նախագիծը։ Անդամներից մի քանիսը անհրաժեշտ էին գըտնում լրացնել երկու և կէս ամիս գոյութիւն ունեցող կանոնները։ Վերաստուգելու համար ներկայացնելի օրինակների առիթով մի քանի անդամներ առաջարկում էին այդ պարտականութիւնը, ինչպէս ներկայումս, թողնել հրատարակիչներին, միւսներն ենթադրում էին, թէ համաձայն նախագծի, պէտք է յանձնել տպարանատէրերին։ Նախագծի որոշման համաձայն, պատկերազարդ հրատարակութիւնների քննվելիք համարները, մինչև հրատարակութեան լոյս տեսնելը, 24 ժամվայ ընթացքում գրաքննիչին ներկայացնելու հարցի առիթով, անդամներից մի քանիսները առաջարկում էին, թէ պէտք է վերացնել այդ կանոնը, իսկ միւսները պնդում էին թէ՝ անհրաժեշտ է և պէտք մտցնել։ Քննութիւնը յետաձգված է։

ՓԱՐԻԶ, 15 փետրվարի։ Չը նայելով Րուվիէի և զինուորական մինիստր Էտիէնի ազդու բողոքներին, պատգամաւորների պալատը ձայների մեծամասնութեամբ, 344 ձայնով 174-ի դէմ ընդունեց այն նախագիծը, որ կրճատում էր 15 կամ 16 օրով պահեստի և մշտական զօրքի գումարումը, մինչդեռ Սենատը կողմնակից էր 28 և 13 օրվայ ժամանակամիջոցին։

ՕԴԷՍՍԱ, 15 փետրվարի։ Դումայի միջնորդութիւնը՝ վերցնելու Օդէսսայից զինուորական դրութիւնը, բաւարարութիւն չը ստացաւ ներքին գործերի մինիստրի կողմից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 փետրվարի։ Արևելեան ինստիտուտի վերատեսուչ Պօզդնեէվը ուղարկված է Եապօնիա, կապ հաստատելու ինստիտուտի և Եապօնիայի գիտնականների ու ուսումնարանական հաստատութիւնների հետ, և ձեռք բերելու ինստիտուտի համար օգտակար հրատարակութիւններ։ Պօզդնէէվի հաղորդագրութեան համաձայն, Եապօնիայում ամենուրեք նա արժանացել է մեծ ուշադրութեան և շատերը պատրաստականութիւն են յայտնել աջակցելու ինստիտուտի սկսածին։ Պատերազմից առաջացած թշնամութիւն բնաւ չէ նկատվում,

ԼՕՆԴՕՆ, 15 փետրվարի։ Պալատական սուգի առիթով, Թագաւորը խիստ ծպտեալ կերպով ճանապարհորդութիւն է կատարելու Եւրօպայում, դուքս Լանկաստերեկու ծպտեալ անունով։ Թագաւորը Պետերբուրգ կը հասնի շաբաթ օրը և կը գնայ Պարիզ, որտեղ կը մնայ մինչև հինգշաբթի, այնտեղից կը գնայ Բիարից։ Պարիզ գնալու վերաբերմամբ ոչ մի բան յայտնի չէ, բայց հաւանական է, որ Թագաւորը կայցելէ Նախագահ Ֆալիէրին։ Յայտնի չէ նոյնպէս, թէ ինչքան ժամանակ կանցկացնէ Թագաւորը Բիարիցում։

ՊՕԼՏԱՒԱ, 15 փետրվարի։ Թոյլատրված է մարտի 9—25-ը նախապատրաստական ժողովներ կազմել, ընդունելու համար մանր հողատէրերից և հոգևորականներից լիազօրներ և գաւառական ժողովներ։

ԱՍԽԱԲԱԴ, 15 փետրվարի։ Կոչանի խանութիւնից հաղորդում են, որ այնտեղ սպասվում են լուրջ անկարգութիւններ։ Ազգաբնակութիւնը շատ անբաւական է Կոչանի այժմեան նահանգապետի գործունէութիւնից։ Ժողովուրդը պահանջում է նախկին իշխանի վերադարձը։

ԲԱԹՈՒՄ, 16 փետրվարի։ Պօստի վրա յարձակվեցին 10 զինված աւազակներ. գողացված է 7232 րուբլի։ Ուղարկվելիք փողային փաթեթների կապոցը աւազակները գետն են շպրտել։ Յարձակվողների կողմից վիրաւորված է ուղեկցող ոստիկանը։

ՊԵԱՏԻԳՕՐՍԿ, 16 փետրվարի։ Տէրսկի շըրջանի գեներալ-նահանգապետի հեռագրով ազատ են թողնված տեղական պօստ-հեռագրական գրասենեակի երեք գլխաւոր ծառայողները։

ԲՈՒԴԱՊԷՇՏ, 15 փետրվարի։ (Բիւրօյի Թղթ.)։ Կառավարչական հաղորդագրութիւնը ցոյց է տալիս, որ Անդրաշի կօալիցիայի առաջարկութիւնները մի նոր ձգտում է միայն, շփոթեցնելու ունգարական ազգը և հասարակական կարծիքը արտասահմանում։ Անդրաշին ինքը սկզբում յայտնեց, որ զօրքերի մէջ ունգարական լեզու մտցնելու հարցը վերաբերում է միապետութեան իրաւազօրութեանը և ոչ թէ պարլամենտի։ Ուրեմն պէտք է նկատել, որ Ունգարիայի նորակոչ զինուորների կէսը խօսում է ունգարական լեզուով։ Ունգարիայի մաքսային ինքնուրոյնութեան պահանջումը ագիտացիայի մի միջոց է, կօալիցիայի համար։ Այդ պահանջը կիրագործվէր Ֆէյերվարիի հաշտարար առաջարկութեան հիման վրա, եթէ կօալիցիան այդ բանը լուրջ ցանկանար։ Կառավարութիւնը յայտնում է, որ ինքնավար քաղաքների պաշտօնեաների ընդդիմադրութիւնը, որոնց ձեռքումն է ընտրութիւնների կատարումը, ընտրութիւնները անհնարին է դարձնում։ Դրա պատասխանատուութիւնը ընկնում է բացառապէս կօալիցիայի վրա։

ԼՕՆԴՕՆ։ 15 փետրվարի, (Րէյտէր)։ Հրատարակված է ծովային մինիստրութեան նոր ֆինանսական տարվայ ծախսը՝ 31 միլիօն 869,500 ֆունտ. քանակութեամբ, որ համեմատելով անցեալ տարվայ հետ՝ 1,520,000-ով պակաս է։ Նաւաշինութեան համար յատկացրված է 9,671,700, անցեալներից 256,409-ով պակաս։ Տարվայ ընթացքում մտադրվում է շինել 4 զրահանաւ, 12 ստորջրեայ նաւակներ, 5 ովկիանական հակա-ականանաւ և 12 ծովափնեայ հակիչ հակաականանաւ։ Բացատրող ցուցակը ցոյց է տալիս, որ 1905 թ. ապրիլի 1-ից մինչև 1906 թ. մարտի 31-ը զինուորելու են երեք զրահանաւ, 8 զրահապատ ականանաւ, մի հատ երկրորդ կարգի, 8 ափ իջնող նաւեր, 17 հակաականանաւեր. 13 ստորջրեայ նաւակներ, մէկ լողացող՝ ածխային պահեստի նաւ։ 1906 թ. ապրիլին շինելու են 6 զրահանաւ, 10 զրահապատ ականանաւ, 12 ծովափնեայ հակաականանաւեր, 5 ովկիանական, մէկ արագընթաց ովկիանական նաւ, մէկ արքայական նաւ, 15 ստորջրեայ նաւակներ, մէկ արհեստանոց նաւ։ Այս նաւերին պէտք է աւելացնել նոր շինութիւնները, որ մտադրվում է մտցնել բիւդժէտի մէջ։ Մտադրվում է այս տարի շինելիք բոլոր նաւերին յատկացնել ոլորապտոյտ անիւներ ունեցող մեքենաներ։

ԽԱՐԿՕՎ, 16 փետրվարի։ Խուզարկող ոստիկանութեան ութ պաշտօնեաների գործի առիթով,—որ պրիստաւ Ֆօն-Լանդէի հետ մեղադրվում էին՝ դատարանին յանձնած մարդկանց սիստեմատիքաբար արած բռնութիւնների և ծեծի պատճառով,—դատաստանական պալատը՝ դասակարգային ներկայացուցիչների հետ միասին՝ մեղաւոր ճանաչեց հինգին և դատապարտեց Ֆօն-Լանդէին 2 ամսվայ բանտարկութեան, միացածներին՝ մէկ ամսվայ։ Երեքը միայն արդար են ճանաչված։

ԿՕԼՕՄԲՕ, 16 փետրվարի։ (Րէյտէր)։ Սինգապուրից եկած «Խօզ» նաւին պատուիրած է գնալ Պարսկական ծոցը, որտեղ անկարգութիւններ են սպասվում։

ՇԱՆԿՀԱՅ, 16 փետրվարի։ (Րէյտէր) Պանչանգայի շատ բնակիչներ, երկիւղ կրելով թնդանօթաձիգ զօրքի գալուստից, ազատվում են փախուստով։ Շատերը ձերբակալված են։

ՆԻԿՕԼԱԵՎ, 16 փետրվարի։ Փետրվարի 15-ին բազմաթիւ զինված ամբոխը դարանամտելով վառօդարանի նկուղում, սկսեց քարեր ձգել պահակների վրա, յետոյ կրակել։ Պահակները կրակ բացին, որից չարագործները անյայտացան։ Կարծվում է, որ նրանք կամենում էին օդը ցնդեցնել նկուղը։

ՄԱՐԻՆՍԿ, 16 փետրվարի։ Կազմվեց հոկտ. 17-ի միութեան կօմիտէտ։ Անդամ են գրվում շատերը։ Ձերբակալութիւնները շարունակվում են։

ԼՕՆԴՕՆ, 16 փետրվարի։ (Րէյտէր) Համայնքների պալատում առևտրի մինիստրը պատասխանելով այն հարցին, որ արված էր դեղօրայքի հարկը—փութին 24 ր. մինչև 40 ր. ռուսաց նոր տարիֆի համաձայն աւելացնելու մասին, ասաց, թէ որովհետև գոյութիւն ունեցող մաքսային հարկը կազմված է Ֆրանսիայից ներմուծվող դեղօրայքի համար՝ ռուս-ֆրանսիական առևտրի դաշնագրի համաձայն, ուստի, աւելացրած հարկը չէ կարելի գործադրել անգլիական դեղօրայքի համար՝ անգլօ-ռուսական դաշնագրութեամբ Անգլիային վերապահված օրէնքների ուժով։ Ընտրված է մի յանձնաժողով, քննելու համար պարլամենտի անկարգութիւնների նախագիծը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 փետրվարի։ Կազմվում է շահախնդիր հաստատութիւնների ներկայացուցիչներից մի խորհրդակցութիւն՝ քննելու համար Եապօնիայի հետ ձկնորսութեան պայմանագիր կապելու հարցը։—Ներքին գործերի մինիստրը փետրվ. 13-ին հեռագրել է նահանգապետներին, պատուիրելով չը ճնշել գիւղական ժողովների ազատութիւնը, որոնք հաւաքվում են նախապէս՝ ընտրելու համար շրջանային ժողովներից ընտրված լիազօրների շրջանային խորհուրդների համար ներկայացուցիչներ։ Գիւղացիների համաձայնութեամբ պէտք է թոյլ տարվի այդ նպատակով կազմել շրջանային խորհուրդներ, որի ժամանակ այդ ժողովները իրաւունք ունենն ազատ քննելու այն բոլոր հարցերը, որոնք վերաբերում են Դումայի ընտրութիւններ կատարելուն և իրանց ներկայացուցիչների՝ Պետական Դումայում ունենալիք գործունէութեան ծրագրին։ Այդ ժողովներում զէմստվային պետերը իրաւունք չունենն ներկայ լինելու, բայց պարտաւոր են ոստիկանութեան հետ միասին միջոցներ ձեռք առնել, որպէս զի համաձայն 1905 թ. սեպտ. 13-ին Դումայի որոշումները գործադրելու համար տուած օրէնքների 25 և 26 յօդուածների,—ներկայ լինեն ժողովներին միայն նրա կազմի մէջ մտնողներ։

ՍԱՐԱՏՕՎ, 16 փետրվարի։ Հողատէրերի ժողովը անհրաժեշտ համարեց կրճատել գիւղացիական բանկի յանձնարարական գործունէութիւնը, բանկի պարտադիր որոշումը՝ հողային պահեստի ֆօնդեր կազմելու համար, և սեփականատէր գիւղացիական դասակարգ կազմելու նպատակով՝ բանկի հողերի վաճառումը։

ՈՒՖԱ, 16 փետրվարի։ Նահանգապետը միջնորդել է վերցնելու արտակարգ պահպանութիւնը նահանգից։

ԿՕՍՏՐՕՄԱ, 16 փետրվարի։ Երեկ գիշեր գաւառական զէմստվային հիւանդանոց մտան 6 զինված անձեր և ազատեցին քաղաքական յանցաւոր Բուլչէկին։ Ընդդիմադրութիւն ցոյց տուող ոստիկանը վիրաւորված է։ Յանցաւորները փախան։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 16 փետրվարի։ Բանտի պահապան զինուորը հրացանով սպանեց բանտարկեալ Իլչենկօյին, որը հրաժարվում էր կատարել պահապանի պահանջը՝ գլուխը պատուհանից չը հանել և չը խօսել անցորդների հետ, և որը հայհոյել էր պահապանին։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

IX ԴԱՍԱՏՈՒՆ ԱՒԱՐՏԱԾ ՄԻ
Վարժուհի ցանկանում է պարապել փոքր դասարանի աշակերտներին և աշակերտուհիների հետ ռուսերէնից, թուաբանութիւնից և հայերէնից։ Հասցէն՝ Тифлисъ, Полицейская ул. д. Парешева № 30. կամ «Մշակի» խմբագրատանը։ 1—3

ԼԵՕ
Ս. ՄԵՍՐՈՊ
(Հայ տառերի գիւտի 1500-ամեակի առիթով)
336 երես, գինը 75 կոպ.։
Դիմել՝ «Գուտտէմբէրգ» գրախանութը, Թիֆլիս. նոյն տեղից կարելի է ձեռք բերել ամեն տեսակ դասական և ընթերցանութեան գրքեր։ 12—15

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշուած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Փօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բաքուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցիշ.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գնալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բաքու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր,
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 14 ր. գիշ
Ալէքսանդրօպոլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 13 ր ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցեր.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	4 ժ. 24 ր գիշ.
Երևան հասնելը	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Գոլովին, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Յ. Մ. ՁԻՆՕՎԱՆԻ—$9^1/_2$—10 ժ. աչքի. ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՆԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.
ԴԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԷՆԲՐԻՆԻՆԱ—$1^1/_2$-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.։
Խ. Գ. ԱՐԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—$7^1/_2$ ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար սենեակներ։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀՐԱՒԷՐ
Հաւլաբարի հայոց սուրբ Կարապետ եկեղեցու յարգելի ծխականներին խնդրում եմ գալ նոյն եկեղեցին կիրակի, ամսիս 19-ին, ժամը 12-ին, 1905 թւի հաշւեմատեանը տեսնելու, սոյն 1906 թւի նախահաշիւը հաստատելու և բացվելի ծխական ուսումնարանի ու եկեղեցու բարեզարդութեան վերաբերեալ մի քանի հարցեր քննելու համար։
Երէցփոխան Գրիգոր Հախվերդեան
(հ. 2. կ.) 2—3

ԵՐԵՔ ԶԻՆՈՒՈՐ
վերջացրած իրանց ծառայութիւնը հեծելազօրքի գնդում, որոնում են որ և է գործ։ Գրագէտ են չորս լեզուից՝ հայերէն, վրացերէն, ռուսերէն, թուրքերէն։ Ունեն դօկումենտներ։ Հասցէն՝ Тифлисъ, Ольгинская ул. մանրածախ Արտեմ Լազրովի խանութ։ 2—2

ԷԼԵԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայել Գեղեվանովի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը,
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը,
Կորգանօվսկայա փող. № 20 Վերայում։ Սեփական տ., տելէֆօն № 791։ (ա. օ.) 68—150

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
նախկին օրդինատօր Մօսկվայի համալսարանի կլինիկայի
Վերսկսեց ընդունելութիւնը՝ յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին։ Ընդունելութիւնը ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան։ Րտիշչեվսկայա փող. № 1, «պօժարնի կօմանդի» դիմացը. տելէֆօն № 11. (ա. օ.) 5—20

Տպագրվում է և շուտով լոյս կը տեսնէ
Բ. ԻՇԽԱՆԵԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓԱԶԵՐԸ
(Արտատպած «Մուրճից»)
Օտար խօսքերի բառարանով, մօտ 80—90 երես, գինը 15 կոպէկ, քանակով գնողներին զիջում կը լինի։
Դիմել՝ Թիֆլիս, «Մուրճի» խմբագրատունը, Գուտտենբերգ և այլ հայ գրավաճառանոցները։ 2—5

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կադետսկայեա փողոցի, տուն Թամաշեանի։ Մուտքը Կադետսկի փողոցից № 2, (ա. օ.) 92—300

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. Նաւասարդեան
Վերադարձաւ և ստանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը։ 52—100

Գուտտենբերգ գրախանութում վաճառվում են
Առանձար, Վշտի ծիծաղը (Ժողովածու երկերի) 1 ր.։
Զուբար Գ. Մահտեսի Սարգիս (գիւղական կեանքից), 50 կ.։
Կոպէ. Պատկերներ և պատմուածքներ, I հատոր 50 կ.։
Առաքելեան Հ. Մի ամիս արևելքում (Ուղևորական ակնարկներ), 40 կ.։
Էրկման-Շատրիան. Մի գիւղացու պատմութիւն վէպ, 1789—1793 ֆրանսիական յեղափոխութեան ժամանակից. բնագրից թարգմ. Վ. Փափազեանց. 1 ր. 25 կ.։
Կոստանեան Կ. Նախաշաւիղ 3-դ տպագր. 25 կ.։
Լէյնըրդ Փ. Կ. Գաղտնիք գեղեցկութեան, առողջութեան և երկայնակեցութեան, թարգմանեց անգլիերէն. Ս. Գ. Վարժապետեան, 80 կ.։
Բագրատունի Ալ. Եպ. Բարի մայր Մարիամը կամ իրականացած տեսիլ, 1874-ից մինչև 1877-ի յիշողութիւններից, 20 կ.։
Լալայեան Ն. Արդարութեան նշանակութիւնը կեանքի մէջ. I—ընդհանուր դատողութիւններ, 10 կ.։
Աղուբեան-Երկայնաբազուկ. Մանկական պարտէզ։ Ձեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար, նօտաներով և նկարներով. 3 ր.։
Բեբէլ, Կնոջ ներկայ և ապագայ դրութիւնը, թարգմ. ռուսերէնից օր. Սօֆիա Շահնազարեանց. 10 կ.։
Պօեխին. Մեղուաբուծութեան ձեռնարկ, 108 պատկերով. թարգմ. ռուսերէնից Մելիք-Վարդանեանց. 75 կ.։
Բժ. Բուդաղեան. Հայ զինուորին. 20 կ.։
Գումարով գնողներին զեղջ է լինում։
Դիմել Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ", Г. Галустяну. 2—2

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1906 թ.
„ՄՈՒՐՃ"
ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
(Նոր շրջան VI տարի)
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ
Ռուսաստան եւ Պարսկաստան—տարեկան 10 ր., կէս տարին 6 ր.,
Արտասահման—տարեկան 12 ր. (32 ֆ.), կէս տարին 7 ր., (18 ֆ.),
ՀԱՏՈՎ ՀԱՄԱՐԸ ՄԻ ՐՈՒԲԼԻ
Ծանօթութիւն. Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս. սկզբում 5 ր., մայիսի 1-ին 3 ր. և յունիսի 1-ին 2 ր.—կամ սկզբում 5 ր. և յունիսի 1-ին 5 րուբլի։ Հայոց դպր. վարժուհիների և ուսուցիչների, գիւղական քահանաների, միջն. ուս. աշակերտների և ուսանողների համար բաժանորդագինն է 8 րուբլի Ռուսաստանում։ Թիֆլիսի բաժանորդները կարող են տարեկան բաժանորդագինը (10 ր.) վճարել մաս-մաս, բաժանելով այնպէս, ինչպէս իրանց յարմար է։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է
Թիֆլիսում—խմբագրատանը (Ճավճավաձեան փողոց տ. № 12)։
Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել Тифлисъ, Въ редакцію журнала „Мурчъ". Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «Murtch».
«Մուրճի» գործակալները.
Աստրախան—Գ. ք. Մկրտումեան։
Բագու—բժ. Գ. Սարգսեան, (Б. Морск. д. № 26) և «Сотрудникъ» գրավ.
Բալախանի—բժ. Ք. Օհանեան։
Բիբի-էյբաթ—պ. Դ. Տէր-Դանիէլեան։
Երևան—«Արարատ» գրախանութ.
Կարս—պ. Համազասպ Տ.-Խաչատրեան։
Մոսկվա—պ. Ստ. Թումեան.
Սօչի—պ. Արամ Յակոբեան (Սեծովեզերեայ շրջան)։
Սամարկանդ—Ռ. ք. Բէկգիւլեան (Անդրկասպեան երկիր)։
Սիմֆերոպօլ—պ. Նիկ. Հայրապետեան։
Թիֆլիս—«Գուտտենբերգ», «Կենտրոն.», «Զ. Գրիգոր. գրավ. և «Հերմէս» տպ.
Վլադիկավկազ—Յ. ք. Սարիկեան (Հիւս. Կովկասի համար)։
Թաւրիզ—Բժ. պ. Յ. Տէր-Ստեփանեան և պ. Հ. Պանիրեան։
Եգիպտոս—դօկտոր Կ. Փաշայեան-Խան (Ալէքսանդրիա)։
Էնզէլի—պ. Գ. Մելիք-Աբրահամեան։
Նոր-Ջուղա—պ. Տիգրան Աբգարեան։
Թէհրան—պ.պ. Ալէքսան Թումեանց և Լ. Բաբայեան։
1906 թւականի նոր բաժանորդները կը ստանան 1905 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների «Մուրճ» ձրիաբար։ 9—10

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15